

ՆԱԽԱԳԱՀ ԱՍՏՏ ԺԱՄԱՆԵՃ՝ ՄԱՍՆԱԿՅԵԼՈՒ ԱՐԱԲԱԿԱՆ ԼԻԿԱՅԻ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻՆ

Հինգշաբթի, 18 Մայիս 2023-ին, Սուրիոյ Նախագահ Պաշտար ալ-Ասատ Սեուտական Արաբիոյ Ժատտ քաղաք ժամանեց՝ Արաբական Լիկայի 32-րդ շրջանի գագաթնաժողովին մասնակցելու համար:

Թագաւոր Ապտուլ Ազիզի Միջազգային օդակայանէն Ներսեա Նախագահ Ասատը դիմադրեց եկած էին Մաքքէի իշխանի փոխանորդ իշխան Պատրիկը պըն Սուլթան պըն Ապտուլ Ազիզ, Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ահմետ ապու Ղէթ եւ այլ պաշտօնական անձինք:



Աւելցնենք, որ Սուրիոյ Նախագահը 10 Մայիսին Սեուտական Արաբիոյ թագաւորէն պաշտօնական հրաւեր-Նամակ ստացած էր՝ մասնակցելու գագաթնաժողովին:

ՆԱԽԱԳԱՀ ԱՍՏՏ ԱՐԱԲԱԿԱՆ ԼԻԿԱՅԻ ԲԱՅՄԱՆ ՆԻՍՏԻՆ. «ՊԱՏՄԱԿԱՆ ԱՌԹԻ ԱՌՋԵՒ ԵՆԸ՝ ՎԵՐԱԿԱՐԳԱԽՈՐԵԼՈՒ ՄԵՐ ՀԱՐՅԵՐԸ ԱՌԱՆՅՈՒՄՔԻՆ ՄԻՋԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ»

Ժատտայի մէջ 19 Մայիսին սկսաւ Արաբական Լիկայի գագաթնաժողովը, որուն մասնակցեցաւ Նաեւ Սուրիոյ Արաբական Հանրապետութեան Նախագահ Պաշտար ալ-Ասատը:



Բացման նիստին իւրաքանչիւր մասնակից երկրի խօսքը արտասանուեցաւ:

Նախագահ Ասատ իր խօսքը սկսաւ յայտնելով, որ այնքան կարեւոր վերնագրեր կան, զորս արտայայտելու համար բառերը անբաւարար կը մնան, իսկ ժողովները սահմանափակ: «Այո՛, վերնագրերը անսահման են. ո՛չ կը սկսին խօսելով արաբներու կողմէ մերժուած սիոնիստական կազմակերպութեան յանցագործութեան մասին ընդդէմ Պաղեստինի դիմադրող ժողովուրդին, ո՛չ կ'աւարտին նկարագրելով օսմանեան սպառնալիքը պատուաստուած Երբայրականներու այլասերած համեմունքով, ո՛չ ալ կ'անջատուին գարգացող մեր հասարակութիւններուն համար առաջնահերթութիւն համարուող բարգաւաճման մարտահրաւերներէն:

Շար.՝ Էջ 6 >

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱԿԱԸ ԿՈՌՆԻՉՈՐԻ ՄԵՋ «ՅԱՆՈՒՆ ԱՐՅՈՒՄԻ, ԸՆԴՂԵՄ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ»

20 Մայիսին Կոռնիճորի մէջ սկիզբ առաւ «Կամաւորական Շարժում» Հասարակական Կազմակերպութեան Նախաձեռնած բազմախազ արաւոնց ժողովրդային հաւաքը, որուն մասնակցած էին Հայաստանի տարբեր մարզերէն եւ Երեւանէն ժամանած քաղաքացիներ, քաղաքական-հասարակական գործիչներ:

Ժողովրդային հաւաքը սկսաւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Սիւնեաց Թեմի հոգեւորականներու օրհնութեամբ եւ Տէրունական աղօթքով:



Ելոյթներ ունեցան Սիսական գունդի հրամանատար Աշոտ Միսա-

Շար.՝ Էջ 3 >

ՓԱՇԻՆԵԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆ ՊԱՏՐԱՍՏ Է ՃԱՆՉԱԼՈՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ 86, 6 ՀԱՉԱՐ ՔՔՄ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ՈՐ ԿԸ ՆԵՐԱՌԷ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՐԸ»

Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեան 22 Մայիսին, մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտարարեց, որ Հայաստան պատրաստ է ճանչնալու Ատրպէյճանի 86, 6 քառ. քմ. տարածքային ամբողջականութիւնը, որ կը ներառէ Նաեւ Լեռնային Ղարաբաղը, սակայն Լեռնային Ղարաբաղի հայութեան իրաւունքներու, անվտանգութեան հարցը պետք է քննարկուի Պաքու-Ստեփանակերտ երկխօսութեամբ:

«86, 6 հազար քառ. քմ. -ը կը ներառէ Նաեւ Լեռնային Ղարաբաղը: Բայց Նաեւ պետք է արձանագրել, թէ մենք կ'ըսենք, որ Լեռնային Ղարաբաղի հայութեան իրաւունքներու եւ անվտանգութեան հարցը պետք է քննարկուի Պաքու-Ստեփանակերտ ձեւաչափով», ըսաւ Փաշինեան:



Անդրադառնալով գործող կառավարութեան դիրքորոշումին՝ վարչապետը ըսաւ, որ ՀՀ-ի այսօրուան կառավարութիւնը ինչ ըսէ-չըսէ, ՀՀ բոլոր կառավարութիւնները ճանչցած են Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը:

«Ատրպէյճանի 86, 6 հազար քառ. քմ. տարածքային ամբողջականութիւնը Հայաստան պատրաստ է ճանչնալու: Եւ մեր ընկալումով՝ Ատրպէյ-

Շար.՝ Էջ 6 >

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶՕՐԱԿՅԻ ԱՐՅՈՒՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԵՆՈՒՄՔԻՆ՝ ՄԵՐԺԵԼՈՎ ԱՐՅՈՒՄԸ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ԱՄԲՈՂԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍ ՆԿԱՏԵԼՈՒ ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿԻ ՓՈՐՁԵՐԸ

Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետական Սուրբ Աթոռը, աշխարհատարած թեմերով, ազգային իշխանութիւններով ու յարակից կառույցներով ու միութիւններով, իր ամբողջական գօրակցութիւնը կը յայտնէ Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի յայտարարութեան՝ մերժելով Արցախի Հանրապետութիւնը Ատրպէյճանի հողային ամբողջականութեան մաս նկատելու որեւէ մօտեցում ու ճիգ որեւէ մէկուն, եւ այս պարագային յատկապէս Հայաստանի Հանրապետութեան վարչապետին ու իշխանութեան կողմէ:



Արդարեւ, 10 Դեկտեմբեր 1991-ին համաժողովրդային քուէարկութեամբ Արցախը ինքնիշխանութեան իր հաւաքական կամքը արդէն արտայայտած է եւ ապա Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն Խորհուրդը 8 Յուլիս 1992-ին վերաշեշտած է Արցախի ինքնիշխանութիւնը:

Միջազգային օրէնքին համաձայն, ժողովուրդի մը ինքնորոշման իրաւունք ունի: Հետեւաբար, Արցախի ժողովուրդի ինքնորոշման արդար իրաւունքը չի կրնար գոհը դառնալ շրջանէն ներս համապարփակ խաղաղութեան հաստատման եւ Ատրպէյճանի հողային ամբողջականութիւնը ճանչնալու փորձերուն:

Հարկ է ըլլալ արթուն, հեռատես ու մանաւանդ՝ միակամ: Արցախը Ատրպէյճանի հողային ամբողջականութեան մաս կազմելով ոչ միայն պիտի վտանգուի Արցախի ժողովուրդին ապահովութիւնը, այլ Նաեւ Հայաստանի գերիշխանութիւնը ու անվտանգութիւնը:

Մեր պատմութեան ներկայ ճակատագրական հանգրուանին, կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի գաւակներուն համախմբուելու եւ գօրակցելու Արցախին:

ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ
 23 Մայիս 2023
 Անթիլիաս, Լիբանան

Տեղական Լրագրող

Խմբագրական

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԽՄՐՈՒՄԸ ԿԸ ՁԵՒԱՒՈՐՈՒԻ

Հայաստան-Ատրպեյճան տարածքային ամբողջականության թուանշաններով փոխճանաչումը յայտարարելով, Փաշինեան մամլոյ ասուլիսով վերահաստատեց, որ Արցախը Ատրպեյճանի կազմին մէջ կ'ընդունի ու պատրաստ է ոչ միայն զիջելու Արցախը ամբողջութեամբ, այլև անոր որպէս ինքնավար մարզ գոյութիւնն անգամ չեղեալ համարելու եւ վերջնականապէս ընդունելու հայկական Արցախը Ատրպեյճանի մաս դարձնելու թշնամիին պայմանը:

Մամլոյ ասուլիսին ընթացքին հնչած յայտարարութիւնները գիշուներու նոր շարք մըն ալ երեւան հանեցին, երբ սահմանագատման եւ սահմանագծման համար Փաշինեան յայտարարեց, որ Նկատի կ'առնուի 1975-ի քարտեզը, որուն մէջ Ատրպեյճանին կը բռնակցուին հայկական ներքաշաններ:

30 եւ աւելի տարիներու հայ ժողովուրդին պայքարը, անոր թափած արիւնն ու ձեռքբերումները ոտնահարելով, Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախաբանը կազմած Անկախութեան հռչակագրի հիմնադրոյթը եւ Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն Խորհուրդի որոշումը բացայայտօրէն անտեսելով, Փաշինեան կը յայտարարէ նոր եւ վերջնական, անդարձ գիշումի մը ուղղուելու իր որոշումը:

Մամլոյ ասուլիսէն վերջ Արցախի Ազգային ժողովը, որուն իրաւասութեան մէջ կը գտնուի միայն Արցախի ճակատագրին հաստատումը, իր կտրական մերժումը յայտնեց Փաշինեանի յայտարարութեան: 20 Մայիսին Հայաստանի «Կամաւորական Շարժում» հասարակական կազմակերպութիւնը Կոռնիձորի մէջ հանրահաւաք մը իրականացնելով իր գորակցութիւնը յայտնեց Արցախին:

Փաշինեանին մամլոյ ասուլիսին անմիջապէս արձագանգեցին հայ հոգեւոր պետերը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ տեղի ունեցած Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի ժողովը հայ-ատրպեյճանական բանակցային գործընթացի առնչութեամբ կատարուած յայտարարութիւնները դատապատելով անընդունելի նկատեց խաղաղութեան պատրուակով «հիմնաւորուող» միակողմանի գիշումները: Խորհուրդը հաստատեց, որ ձեռնարկուող անհեռատես քայլերով, Արցախի Հանրապետութիւնը Ատրպեյճանի կազմին մէջ ճանչնալով՝ Հայաստանի իշխանութիւնները Արցախի մեր քոյրերն ու եղբայրները անխուսափելիօրէն կը կանգնեցնեն նոր ցեղասպանութեան ու հայրենազրկման դիմաց:

Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետական Սուրբ Աթոռը, աշխարհատարած թեմերով, ազգային իշխանութիւններով ու յարակից կառույցներով ու միութիւններով իր ամբողջական գորակցութիւնը յայտնեց Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի յայտարարութեան՝ մերժելով Արցախի Հանրապետութիւնը Ատրպեյճանի հողային ամբողջականութեան մաս նկատելու որեւէ մօտեցում ու ճիգ որեւէ մէկուն, եւ այս պարագային յատկապէս Հայաստանի Հանրապետութեան վարչապետին ու իշխանութեան կողմէ: Ան կոչ ուղղեց մեր ժողովուրդի գաւաակներուն համախմբուելու եւ գորակցելու Արցախին:

Հայ քաղաքական ուժեր Սփիւռքի մէջ թէ հայրենիքի նոյնպէս դատապարտման ու Արցախի յանձնումի մերժման կոչերով հանդէս եկան: Նման կոչերով հանդէս եկան Արցախի նախկին եւ ներկայ նախագահները, Հայաստանի նախկին նախագահներ:

Արցախի Հանրապետութեան նախագահը կոչ ուղղեց Սփիւռքին գորակցելու եւ վեր առնելու Արցախի ժողովուրդին ազգային ինքնորոշման իրաւունքի պահպանումը՝ քաղաքական տարբեր լծակներու օգտագործումով:

Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի մէջ ծայր առած մերժման ալիքը օրըստօրէ կ'ընդլայնի, համազգային համախմբումը ձեւ ու մարմին կ'առնէ:

Պարտուողական նման ստորագրութիւն կասեցնելու համար հարկ է ուժերու մեկտեղումն ու գործնական քայլերու ձեռնարկումը:

28 Մայիս 1918-ի օրերը կը վերյիշեցնեն Հայաստանի Հանրապետութեան կերտիչներուն պատգամը՝ հայ ազգը իր սեփական ուժերով միայն կրնայ տեր կանգնիլ իր հայրենիքին եւ իրաւունքներուն: Այդ ուժերու մեկտեղման ուշացումը անդարձ գիշումներու աղետին կրնայ հասցնել մեր ազգն ու հայրենիքը:

«Գ.»

-Ժատուէի մէջ տեղի ունեցած Արաբական Լիկայի 32-րդ շրջանի գագաթնաժողովին եզրափակիչ յայտարարութեան մէջ առաւելաբար արձանագրուեցան հետեւեալները:

-Գագաթնաժողովին մասնակցող կողմերը կը շեշտեն, որ Պաղեստինեան Դատը առանցքային է արաբական երկիրներուն համար եւ տարածաշրջանի խաղաղութեան գըլխաւոր գործօններէն մէկն է:

-Մասնակից երկիրները խստիւ կը դատապարտեն Պաղեստինի ժողովուրդին դէմ իրագործուած թըշնամական արարքները:

-Կողմերը կը հետեւին Սուտանի Հանրապետութեան մէջ տիրող տագնապալի իրավիճակին եւ մտահոգութիւն կը յայտնեն տարածաշրջանի երկիրներուն վրայ անոր ունենալիք բացասական ազդեցութեան գծով:

-Կողմերը կ'ողջունեն Արաբական Լիկայի խորհուրդին հրապարակած որոշումը՝ Արաբական Լիկայի խորհուրդին եւ անոր ենթակայ հաստատութիւններու ժողովներուն մէջ սուրիական կառավարութեան պատուիրակութեան անդամակցութեան վերաշխուժացման մասին, յուսալով, որ այս որոշումը Սուրիոյ Հանրապետութեան մէջ խաղաղութիւնը հաստատող, Սուրիոյ գերիշխանութիւնը եւ տարածքային ամբողջականութիւնը պահպանող քայլ մը ըլլայ: Անոնք կարեւոր կը համարեն Սուրիոյ տագնապի լուծման գծով գործնական քայլերու ձեռնարկումը, ինչ որ կը համապատասխանէ արաբական միացեալ շահերուն եւ արաբական երկիրներուն միջեւ եղբայրական կապի ամրապնդման:

-Կողմերը կը վերահաստատեն իրենց աջակցութիւնը Եմէնի Հանրապետութեան մէջ խաղաղութեան հաստատման քայլերուն:

-Կողմերը իրենց գօրակցութիւնը կը յայտնեն Լիբանանին ու լիբանանեան կողմերուն կոչ կ'ուղղեն հանրապետութեան նախագահի նշանակման քուէարկութեան շուրջ խորհրդակցելու:

-Անոնք կը շեշտեն արաբական ներքին հարցերուն մէջ արտաքին միջամտութիւններու կանխման կարեւորութիւնը:

-Կը մերժեն պետական հաստատութեան դուրս գինեալ ուժերու գոյարման երեւոյթը:

-Կը շեշտեն արաբական ինքնութեան պահպանման իրենց հաւատարմութիւնը:

-Սուտանական Արաբիան նախանձախնդիր կը մնայ տարածաշրջանի տնտեսական բարգաւաճման բարենպաստ պայմաններու ստեղծման:

-Անցնող օրերուն, Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատ ստանձնեց Սուրիոյ Արաբական Հանրապետութեան մէջ ՄԱԿ-ի մարդասիրական հարցերու մնայուն ներկայացուցիչ Ատամ Ապտուլ Մաուլայի, ինչպէս նաեւ Թունուսի Հանրապետութեան լիազօր դեսպան Մուհամմետ Մուհագապիի հաւատարմագրերը:

-Զինաստանի արտաքին գործոց նախարարութեան բանբերը մամլոյ ասուլիսի մը ընթացքին անդրադառնալով Սուրիոյ Արաբական Լիկայ վերադարձի որոշումին ըսաւ.

«Ուրախ եմ արաբական աշխարհէն ներս տեղի ունեցած հաշտութեան եւ համերաշխութեան համար. երեւոյթ մը, որ յոյս ներշնչեց տարածաշրջանի ժողովուրդներուն»:

Ան շնորհաւորեց Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատը Արաբական Լիկայի գագաթնաժողովին Սուրիոյ Հանրապետութեան մասնակցութեան առիթով, որով արաբական մեծ ընտանիքը միաւորուեցաւ:

-Սուրիոյ կառավարութիւնը Հունսի Արնուսի նախագահութեամբ գումարած իր հերթական նիստին ընթացքին քննարկեց Սուրիոյ տնտեսական եւ կենցաղային իրավիճակը: Անդրադարձ կատարուեցաւ նաեւ յառաջիկայ օրերուն քաղաքացիներուն դիմագրուած կենցաղային տարբեր դժուարութիւններու մեղմացման համար կառավարութեան որոշեալ քայլերուն շուրջ:

Սուրիոյ Փոխարարութեան նախարարութեան յանձնարարուեցաւ Սուրիական Օդանաւային Ընկերութեան միջոցով եւ Սուրիոյ Արտաքին Գործոց նախարարութեան հետ գործակցաբար Սուտանի սուրիական համայնքի գաւաակները դուրս բերել երկրէն, նկատի ունենալով տեղւոյն տագնապալի վիճակը:



Լուրեր Հայաշխարհին

ՀՅԴ ԲԻՐՈՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ



2023 թ. Մայիսի 22-ի մամուլյ առուլիսում ՀՅԴ վարչապետի պաշտօնը զբաղեցնող անձը անթաքայտ յայտարարեց Արցախը եւ Տաւուշի ու Արարատի մարզերի Նախկին անկլաւները Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան մէջ ճանաչելու մասին, ինչը ՀՅԴ վարչախմբի կողմից հետեւողական կերպով իրականացուող հակապետական եւ հակազգային քաղաքականութեան հերթական դրսեւորում է:

Թուրք-ատրպէյճանական տանդէմի հետ ձեռք ձեռքի տուած Հայաստանի այսօրուայ իշխանութիւնը ծրագրուած կերպով փորձում է կտրել մեր ժողովրդի դիմադրութեան ոգին՝ անխուսափելի կործանման տանելով երկիրը:

Պարտութիւնների, կորուստների, նուաստացումների ընթացքը թեւակոխում է նոր փուլ: Այս իշխանութեան պաշտօնավարման ամեն մի օրն ու ժամը այլեւս գոյութեանական սպառնալիք է:

Սակայն ամեն ինչ դեռ կորսուած չէ, վիճակը հնարաւոր է շտկել, մենք ունենք այդ ներուժը: Ազգային ուժերի ջանքերի մեկտեղմամբ անհրաժեշտ է օր առաջ վերականգնել Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութիւնը եւ թեկում մտցնել վիճակի մէջ: Ուժեղ, արդար, արժանապատիւ Հայաստանն է գրաւականը մեր անվտանգութեան ու ապագայ յաջողութիւնների: Բայց Նախ պետք է կանխել կենսական գիշումներ պարտադրող անձնատուական (կապիտուլացիոն) նոր պայմանագրերի ընդունումը՝ բացառելով ամառ ժողովրդի անմիջական մասնակցութեան որեւէ համաձայնութեան կայացում:

Հայաստանի որեւէ իշխանութեան որեւէ գործողութիւն, որը կասկածի տակ է դնում Արցախում անցկացուած հանրաքուէների արդիւնքները, Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութիւնն ու դրա անքակտելի մասը կազմող անկախութեան հռչակագիրը, ի սկզբանէ առ ոչինչ է:

Մենք չենք հանդուրժելու հայ ազգի շահերը ոտնահարող պարտադրող համաձայնութիւնները: Արժանապատիւ ու հայրենատեր բոլոր հայերը այս առումով անելիք ունեն: Մենք հաւատում ենք՝ միասին կարող ենք թեկել պատմութեան ընթացքը:

ՀՅԴ ԲԻՐՈ
23 Մայիս 2023

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱԽՔ...

Սկիզբ՝ էջ 1

եան («Աշոտ Երկաթ»), ՀՅԴ ՀԵՄ ԿՎ Նախագահ Գոռ Սարգսեան, «Համախմբում» շարժման խորհուրդի անդամ Աւետիք Չալապեան, ՀՅԴ քաղաքական ներկայացուցիչ Արմեն Ռուստամեան, «Կամաւորական Շարժում» ՀԿ Նախագահ Զրանդ Մարգարեան: Հանրահաւաքի ակտիւստին հըն-

չեց ուղերձ՝ ուղղուած հայութեան եւ ի լուր աշխարհին:

Նշենք, որ Նոյն պահուն Արցախի մէջ Նոյնպէս երթ եւ հանրահաւաք տեղի ունեցած է՝ յաջակցութիւն Կոռնիճորի հանրահաւաքին: Արցախցիները՝ Ստեփանակերտի Չիւնուորական Պանթեոնէն քայլերթով ուղղուած են դէպի Արցախը Մայր Հայաստանին կապող ինքնաշարժի ճանապարհի Չառին Բաղ կոչուող տեղամաս:

ԱՐՃԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՊԱՀՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ «ՈՉ ՈՔ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆԸ ՈՒՆԻ ՈՐՈՇԵՆՈՒ ՄԵՐ ՈՒ ՄԵՐ ԶԱԽԱԿՆԵՐՈՒՆ ԱՊԱՊԱՆ»

Արցախի Նախկին Նախագահները հետեւեալ յայտարարութեամբ հանդէս եկած են.

«Հայաստանի Հանրապետութեան գործող իշխանութիւններու պահուածքն ու դիրքորոշումը՝ Արցախի ժողովուրդին համար ճակատագրական հարցերով Ատրպէյճանի ցանկութիւններուն անվերապահ ենթարկուելու տրամաբանութեամբ, անընդունելի են:

Վերջին տարիներու ընթացքին բազմաթիւ եղած են ՀՀ իշխանութիւններուն Արցախի պետականութիւնը կասկածի տակ դնելու անհասկնալի քայլերը:



Մեզի հասանելի խողովակներով փորձած ենք զգուշացնել զիրենք Նման վարքագիծի կործանարար հետեւանքներէ:

Ցաւով կը յայտնենք, որ մեր զգուշացումները սթափեցնող ազդեցութիւն չեն ունեցած: Բազմաթիւ ծախողումներու պատճառով այսօր կանգնած ենք տապալած բանակցութիւններուն, աղէտաբեր պատերազմին, իսկ հիմա ալ՝ հակառակորդի բոլոր պահանջներն ու քմահաճոյքները կատարելու պարտադրանքին առջեւ:

Տեւական ժամանակ մենք ձգտած ենք հաւատարիմ մնալ հայկական երկու հանրապետութիւններու քաղաքական վերնախաւերուն մօտ ձեւաւորուած այն աստիճանին, որուն համաձայն իրար ներքին գործերուն չմիջամտելը քաղաքական որոշակի դրսեւորում սեպուած է:

Սակայն ինչ որ արձարծուած է Հայաստանի գործող վարչապետին կողմէ այսօր, սասանած է հայկական պետականութեան հիմքերը, մասնաւորապէս, խախտելով համայն հայութեան իրաւունքներուն պաշտպանը հանդիսանալու պարտաւորութիւնը:

Մեր Նախնիներուն դարաւոր պայքարին եւ այդ հիմքին վրայ ձեւաւորուած արցախեան ազգային-ազատագրական պայքարին շնորհիւ վեր խոյացած է ազգային արժանապատուութեան նոր որակ, զոր ոչ ոք Նսեմացնելու իրաւունք ունի, անկախ իր ստանձնած պաշտօնէն ու դիրքէն:

Ոչ ոք բարոյական իրաւունք ունի որոշելու մեր ու մեր զաւակներուն ապագան: Արցախը չէ ընդունած եւ պիտի չընդունի այն մօտեցումները, որոնք այսօր ներկայացուած են ՀՀ վարչապետին կողմէն եւ, ինչպէս Նախապէս պայքարած է, հիմա, բոլոր կարելի միջոցներով պիտի պայքարի իր հայրենիքին մէջ արժանապատիւ ապրելու իրաւունքին համար:

Կը հաւատանք, որ ինչպէս Նախորդ տարիներուն, այնպէս ալ այսօր համայն հայութիւնը պիտի ըլլայ Արցախի ժողովուրդի կողքին:

Արցախի Հանրապետութեան Երկրորդ Նախագահ Արկաշի Դուկասեան
Արցախի Հանրապետութեան Երրորդ Նախագահ Բակօ Սահակեան
22 Մայիս 2023
Ստեփանակերտ»

ԱՐՃԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶՊԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանի 22 Մայիսի մամուլյ առուլիսում կատարուած յայտարարութիւնը, որի մէջ Նա վերահաստատել է իր պատրաստակամութիւնը՝ Արցախը ներառելու Ատրպէյճանի կազմում, խիստ վրդովմունք ու զայրոյթ է առաջ բերել Արցախի Հանրապետութիւնում: Նիկոլ Փաշինեանը, փաստօրէն, իր այդ յանձնառութեամբ կոպտօրէն խախտում է Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան հռչակագրի եւ Սահմանադրութեան ամրագրումներն Արցախի մասին, առանձնապէս, Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն Խորհրդի 1992 թուականի Յունիսի 8-ի որոշման հրամայական հիմնադրոյթն առ այն, որ «Հայաստանի Հանրապետութեան համար անընդունելի համարել միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը նշուած կը լինի Ատրպէյճանի կազմում»:



Եւս մէկ անգամ վերահաստատում ենք, որ Արցախի կարգավիճակն արդէն իսկ որոշուել է 1991 թուականի Դեկտեմբերի 10-ի համաժողովրդական կամարտայայտութեամբ եւ որեւէ իշխանութիւն իրաւասու չէ այն թեկնելու:

Մեզ համար անընդունելի եւ առ ոչինչ են Արցախի Հանրապետութեան ինքնիշխանութիւնը, մեր ժողովրդի ինքնորոշման իրաւունքը եւ դրա իրացման փաստն անտեսող Նիկոլ Փաշինեանի ցանկացած յայտարարութիւն եւ դրա հիման վրայ կազմուած որեւէ փաստաթուղթ: Արցախը երբեք չի հրաժարուելու իր պայքարի անշեղ ուղուց:

Խորապէս անհանգստացած անկայ վտանգաւոր իրողութեամբ՝ Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովը կոչ է անում համայն հայութեանը թոյլ չտալ Հայաստանի Հանրապետութեան օրուայ իշխանութիւնների կողմից հայոց հայրենիքի մի մասը՝ Արցախի Հանրապետութիւնը եւ Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան տարածքները անկլաւների անուան տակ Ատրպէյճանին զիջելու ուղղուած աղէտալի քայլերը, ինչն անխուսափելիօրէն յանգեցնելու է հայկական պետականութեան կորստին:

Միաժամանակ դիմում ենք Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան Նախկին ու գործող Նախագահներին՝ կոչ անելով դատապարտել Նիկոլ Փաշինեանի՝ 2023 թուականի Մայիսի 22-ի արած յայտարարութիւնները: Այլապէս, ձեր լռութիւնը կը դիտարկենք որպէս Հայաստանի Հանրապետութեան վարչապետի հետ համաձայնութեան նշան:

22 Մայիս 2023
Ստեփանակերտ»

ՆԱԿԱՊԵՏԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պրիլբսելեան հանդիպումներն բխած Շառլ Միշելի յայտարարութեան հիմնական տրուութիւնը՝ Հայաստան-Ատրպեյճան տարածքային ամբողջականութիւններու փոխանակումին ամրապնդումը, թուանշաններով տարածքներու յստակացումն էր:

Փաշինեանի մամուլի ասուլիսով վերահաստատուեցաւ այդ մէկը, ինչ որ համազօր է Արցախը Ատրպեյճանի կազմին մէջ ընդունելուն: Մամուլի ասուլիսին ընթացքին հնչած յայտարարութիւնները նոր բաժին եւս ակնարկեցին հայկական կողմէ արձանագրուող հիմնական զիջումներուն վրայ: Սահմանագատման եւ սահմանագծման համար նկատի կ'առնուի 1975-ի քարտեզը, ուր առանց որեւէ իրաւական հիմքի Ատրպեյճանին բռնակցուած են հայկական ներքաշանները (անկլաւներ): Հիմա ամենայն պարզութեամբ Փաշինեան կը յայտարարէ, որ այդ ներքաշանները եւս պիտի յանձնուին Ատրպեյճանին:

Անհիմն եւ վիճարանութեան չդիմացող առարկութիւնն է այն, որ առաջին անգամը չէ, որ Երեւան պաշտօնապէս կը ճանչնայ Ատրպեյճանի տարածքային ամբողջականութիւնը: Որեւէ բարձրաստիճան պաշտօնատար նման թուանշաններով չէ սահմանած Ատրպեյճանի տարածքը: Իսկ թէ՛ ՄԱԿ-ի կանոնադրութիւնը, եւ թէ՛ Ալմա Աթայի հռչակագիրը իրաւական ելք բաց կը ձգէին Արցախը Ատրպեյճանի կազմէն դուրս նկատելու եւ այդ ուղղութեամբ աշխատելու: Այլ խօսքով, Երեւանը չէր ընդունած Արցախը Ատրպեյճանի կազմին մէջ. առաւել եւս, հայկական ներքաշաններու մասին որեւէ զիջումի յայտարարութիւն չէր կատարուած երբեմնից:



Անբովանդակ է նաեւ Փաշինեանի յայտարարութեան կցուած բաղադրիչը՝ Պաքու-Ստեփանակերտ բանակցութիւններու սկսման եւ միջազգային գործընկերակազմով Արցախի ժողովուրդի իրաւունքներու եւ անվտանգութեան երաշխաւորման: Պաքուն բազմիցս պարզ դարձուցած է, որ այդ բանակցութիւններու օրակարգը բացառապէս Ատրպեյճանի «ղարաբաղցի քաղաքացիներ»-ու համարկումին կրնայ վերաբերի: Նոյնպէս՝ աշխարհը ակաւատեալ է, որ միջազգային որոշումներն ու օրէնքները ինչպէ՛ս կը յարգուին ռազմական յանցագործութիւններու ստուար թղթածրար կազմած, Արցախը շրջափակած, մարդասիրական աղետ ստեղծած եւ ցեղային գտման քաղաքականութենէն չհրաժարած Ատրպեյճանին կողմէ:

Արցախի Ազգային ժողովը միաձայնութեամբ մերժեց եւ անընդունելի նկատեց Փաշինեանի յայտարարութիւնները եւ կոչ ուղղեց համայն հայութեան՝ միաւորուելու եւ Արցախին գօրակցելու, մերժելով Երեւանէն հնչած յանձնուողականութիւնը:

Առաջին անգամը չէ, որ Արցախը նման օրհասական պահու կը միաւորուի եւ հանդէս կու գայ միաձայն դիրքորոշումներով եւ անկկալութեամբ:

Այս միակամութիւնը դժբախտաբար, ցարդ կը մնայ Արցախի սահմաններուն մէջ: Կարմիր գիծերը հատուած են, եւ Երեւանը կ'ուղղուի այս ձեւով երկրորդ յանձնուողական պայմանագիրը ստորագրելու: Կան յստակ իրաւական արգելքներ նման քայլի դիմելու: Այս յայտարարութիւնները արդէն իսկ հակապետական կը նկատուին, եթէ նկատի ունենանք թէ՛ Սահմանադրութեան նախաբանը կազմած Անկախութեան հռչակագիրի հիմնադրոյթը, եւ թէ՛ Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն Խորհուրդի որոշումը:

Վերոյիշեցման կարգով. ըստ Անկախութեան հռչակագիրին՝ «... Կենսագործելով ազգերի ազատ ինքնորոշման իրաւունքը, հիմնուելով 1989 թուականի Դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի եւ Լեռնային Ղարաբաղի վերամիաւորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային Խորհրդի համատեղ որոշման վրայ...»:

Եւ՝ 8 Յունիս 1992-ի Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն Խորհուրդի որոշումի 2-րդ կետը. «Հայաստանի Հանրապետութեան համար անընդունելի համարել միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ Լեռնային Ղարաբաղը նշուած կը լինի Ատրպեյճանի կազմում»:

Այս երթի կասեցման գործընթացը սկսաւ Արցախէն: Հիմա կ'ակնկալուի համայն հայութեան ամբողջական գօրակցութիւնը Արցախի Ազգային ժողովին եւ անոր կատարած յայտարարութեան:

Բոլոր իրաւական դրոյթները կան հակասահմանադրական եւ հակապետական համարելու Արցախը Ատրպեյճանին մաս նկատելու փաշինեանական յայտարարութիւնները: Մինչ այդ անյետածելի է համազգային համախմբումը:

Խմբագրական «Ազգակ»-ի

ՄԻԻԹԱՐԻՉ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԴԵՐԸ



Խորհն Քիւյ. Պէրթիզեան

Աշխարհի մէջ չկայ կայուն խաղաղութիւն, կատարեալ երջանկութիւն եւ երանական հանգստութիւն: Ժամանակները եղած են տագնապալի, պայմանները՝ խառնաշփոթ, իրավիճակները՝ տարօրինակ, մեղքերը՝ բազմատեսակ, մոլորեցուցիչ հոսանքները բազմաբնոյթ, բարոյական ախտերը՝ անբուժելի եւ փրկութեան կանչը շատերու համար դարձած է անլսելի: Խաբկանքներով լեցուն այս աշխարհը իրապօրիչ պատկերով կը ներկայանայ: Ուստի մարդիկ յաճախ կը մոռնան յաւիտենական ճշմարտութիւնները, հոգեւոր սկզբունքները, Աւետարանին պատգամները եւ եկեղեցւոյ առաքելութիւնը: Եթէ նայինք այսօրուան տառապեալ աշխարհին, հաւանաբար ակնկալելի զգանք, թէ անմիջական կարիք ունինք մխիթարուելու:



Հնարքները ցաւը մեղմացնող ժամանակաւոր միջոցներ են: Մարդկային հնարաւորութիւնները վիշտը փարատող մակերեսային լուծումներ են: Խիղճն ալ Նոյնիսկ սխալ դատումներ կը կատարէ: Ահա թէ ինչո՞ւ մեր Տէր՝ Զրիստոս կ'ըսէ. «... Ժամանակ պիտի գայ, երբ ո՛վ որ ձեզ սպաննէ՝ պիտի կարծէ թէ Աստուծոյ ծառայութիւն կը մատուցանէ» (Յի 16.2):

Հողածիններս մեր պանդխտութեան տարիներուն կը փափաքինք Նուագագոյն ձեւով տառապիլ: Այլ խօսքով՝ ապրիլ առանց ցնցիչ պատահարներու եւ դժուար պայմաններու: Ընդհանրապէս երեւոյթով կը դատենք, մարդկային «ակնոցով» կը վերլուծենք եւ Աստուծոյ կամքին համակերպելու որոշումը կը յետաձգենք: Սովորաբար մեր ճիգերուն, ծրագիրներուն, փորձառութիւններուն եւ կարելիութիւններուն կը վստահինք, իսկ երբ ներկայացուցեան մատուցենք յուսահատեցուցիչ կը թուի ներկան, անբաղձալի կը նկատենք ապագան, Նոյնիսկ «անտեղի եւ անժամանակ» կը համարենք մեզ յուզող անսպասելի պատահարները եւ կը սկսինք փնտռել մխիթարութիւն: Մահկանացուներս կ'ուզենք երկրի վրայ ապրիլ դրախտային կեանք, կ'ուզենք ժամանակաւոր այս կեանքի ընթացքին վայելել յաւիտենական ուրախութիւն: Մինչդէռ հոս, այս աշխարհին մէջ, մնայուն չէ ուրախութիւնը: Կա՞յ արդեօք անձ մը, որ հարագատի մը մահուան առիթով, տխուր դէպքի մը հետեւանքով, ննջեցեալ հարագատները վերոյիշելով, մեղքի մը համար զոջալով կամ ծախողութեան հանդիպելով՝ ցաւ, վիշտ, ափսոսանք եւ տկարութիւն չզգայ: Նմանօրինակ իրավիճակներուն տոկալը եւ համբերելը խոհեմութիւնն է: Հոս կը կայանայ Սուրբ Հոգիին տեղը եւ դերը հաւատացեալին կեանքին մէջ:

Սուրբ Հոգին հրաշալի կերպով կը ներգործէ: Ան շնորհներով կը գարդարէ, պարգեւներ կը բաշխէ, Տիրոջ խօսքին գօրութիւնը կը յայտնէ, ճշմարտութիւնը կը ծանուցէ, հաւատացեալը կը ներշնչէ, եկեղեցւոյ սպասաւորը կ'օժտէ, Մկրտածին մարմինը Աստուծոյ տաճարի կը վերածէ, Ս.Պատարագի արարողութեան ընթացքին կը ներգործէ, աղօթողներուն համար կը բարեխօսէ եւ կը մխիթարէ:

Եկե՛ք ուշադրութիւն դարձնենք Սուրբ Հոգիին մխիթարող դերին վրայ: Նախ ի մտի ունենալու ենք թէ ո՛չ միայն սգակիրը կարիքը ունի մխիթարութեան, այլ՝ բոլորս անխտիր: Մենք մեր հաւատքի երթը շարունակելու համար կարիք ունինք մշտական քաջալերանքի, հոգեւոր թափի ու բարոյական կորովի: Այլապէս փորձութեան ժամանակ շուտով կը սայթաքինք եւ տագնապի պարագային անմիջապէս կը յուսահատինք:

Ուրեմն Սուրբ Հոգին Իր աստուածային գօրութեամբ մեր ընթացքը կ'ուղղէ, կը գօրակցի, օգնական կ'ըլլայ, որպէսզի Զրիստոսի հետեւինք եւ Իր հաւատարիմ աշակերտները կոչուինք: Զրիստոս կ'ըսէ. «Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրս ձեզի պիտի դրկէ իմ անունովս, անկեղծ ձեզի ամեն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ ինչ որ ես ձեզի ըսի» (Յի 14.26):

Այս խոստումը կատարուեցաւ Պենտեկոստի օրը, երբ առաքելները Սուրբ Հոգիով լեցուցան եւ Զրիստոսի վկաները հանդիսացան:

Առաքելներուն պտղաբեր քարոզութիւնը, աստուածահաճոյ ծառայութիւնը, հաւատքին տարածումը, հոգեւոր ծաղկումը Սուրբ Հոգիին ներկայութեան ազդու նշաններն էին:

Տէր Աստուած Իր սերը յայտնեց նախ Իր Միածին Որդին աշխարհ ընդկելով (Յի 3.16-17), ապա Իր Սուրբ Հոգին դրկելով: Առաքելով կ'ըսէ. «Աստուծոյ սերը տեղ գտած է մեր սիրտերուն մէջ՝ մեզի տրուած Սուրբ Հոգիին միջոցաւ» (Յի 5.5):

Մխիթարիչ Սուրբ Հոգին անբաժան է մեր կեանքէն, անշուշտ եթէ հաւատքի մղումով ինդրենք Իր օգնութիւնը եւ անկկալենք հրաշալի միջամտութիւնը մեր առօրեային ներս: Սուրբ Հոգին անորոշ կամ պատահական գօրութիւն չէ, այլ Ամենասուրբ Երրորդութեան Երրորդ Անձն է, որ Տիրոջ պատգամները կը յիշեցնէ, կը մխիթարէ, եւ ի խնդիր եկեղեցւոյ շինութեան հարկ եղած պարգեւները կը բաշխէ: Պօղոս առաքել կ'ըսէ. «Ձանի որ հոգեւոր պարգեւներուն կը փափաքիք, ջանացէք մասնատնող տիրանալ այն պարգեւներուն՝ որոնք եկեղեցւոյ օգուտին կը նպաստեն» (Ա.Կր 15.12): Այստեղ առաքելը կը պարզէ պարգեւներուն նպատակը: Եկեղեցւոյ պայծառութեան ծառայելու է աստուածատուր պարգեւը, որուն տուիչը Սուրբ Հո-

Շար.՝ 12 7

ՀԱՐՅԱԶՐՈՅ

ՄԵՂՐԻԿ ՄԱՆՃԵԱՆ.« ԱԶԳ. ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԸ ԳԱՂՈՒԹԻ ԶԱԲԱԿՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄ, ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅԵՑԻ ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԶԱՄԲՈՂ ԿՐԹԱԿԱՆ ՄԻԱԿ ՕԶԱԽՆ Է»

Լաթաքիոյ Սրբոց Նահատակաց Ազգ. վարժարանի 100-ամեակին առիթով, «Գանձասար» հետեւեալ հարցազրոյցը ունեցաւ վարժարանի հոգաբարձութեան ատենապետ երկրչփ. Մեղրիկ Ապահուսի-Մանճեանի հետ.

«Գանձասար»-ի՞նչ պայմաններու մէջ հիմնուած է Ազգ. Սրբոց Նահատակաց վարժարանը եւ ի՞նչ դեր ունեցած է համայնքի ձեւաւորող կեանքին մէջ:

Մեղրիկ Ապահուսի-Մանճեան- 1922-ին, Հայոց Ցեղասպանութենէն վերապրած եւ Կիլիկիայէն որպէս գաղթական Լաթաքիա հասած հայորդիներու նուիրական ջանքերուն շնորհիւ հիմնուած է Լաթաքիոյ հայ գաղութի վարժարանը, Ս.Յակոբեանց Ազգ. երկսեռ վարժարան անուանով: Յաջորդող տարիներուն, նիւթական խեղճուկրակ պայմաններու մէջ վարժարանը քայլ առ քայլ կը կայանայ, դառնալով գաղութի գաւակներուն ուսում եւ գիտութիւն ջամբող եւ հայեցի շունչով դաստիարակող կրթական միակ օջախը:

«Գ.»- Այսօր, 100 տարի վերջ, ի՞նչ վիճակ կը պարզէ վարժարանը, ինչպիսի՞ գարգացումներ կրած է կառուցային եւ ուսումնակրթական առումով:

Մ.Մ.- 1922-ին հիմնուած վարժարանին երթը կ'ըլլայ շարունակական՝ շնորհիւ գաղութի ղեկավարներու ջանքերուն եւ հաւատաւոր ու ժիր կրթական մշակներու գերագոյն ճիգերուն: Եղեռնին գոհ գացած 1,5 միլիոն նահատակներու յիշատակին եւ Ցեղասպանութեան յիսնամեակին առիթով, վարժարանը կը վերանուանուի Ազգ. Սրբ. Նահատակաց վարժարան:



Իր հին կառուցով եւ ուսումնական համեստ, բայց գոհացուցիչ կարելիութիւններով, վարժարանը կը բոլորէ 20-րդ դարը եւ 21-րդ դար կը թեւակոխէ շինարարական եւ կրթական մեծ ծրագիրներու իրագործումով: Արդ, 18 Նոյեմբեր 2001-ին, Գերշ. Տ.Սուրբէն Սրբ.Արք.Գաթարոյեան կը կատարէ հին կառուցիւն վրայ բարձրացած դպրոցի երկարակահի Նորակառուց շէնքին բացումը, որ կ'իրագործուի Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան նիւթական իշխանական նուիրատուութեամբ, ժողովրդային հանգանակութեամբ եւ օրուան Թաղական հորհուրդին ու շինարարական յանձնախումբին հետեւողական աշխատանքով: Հետագային՝ 2003-ին, վարժարանը կ'օժտուի միջնակարգի բաժնով:

Դար մը ամբողջ գանազան մարտահրաւերներ դիմագրաւող այս ամրակուռ մտքի տաճարը այսօր կ'արձանագրէ կրթական բարձր նուաճումներ, որոնց լաւագոյն ապացոյցն են պետական քննութիւններուն վարժարանի աշակերտներուն ձեռք բերած փայլուն արդիւնքները:

Հարկ է յիշել, որ վարժարանը օժտուած է գիտական եւ գրական ճիւղերու մէջ հմտացած համալսարանաւարտ ուսուցիչներով, որոնք տնօրէնութեան եւ հոգաբարձութեան հետեւողական քաջաւերանքով ճիգ չեն խնայեր ուսումնական մակարդակի բարելաւման ի խնդիր:

«Գ.»-Հարիւրամեակին առիթով ինչպիսի՞ աշխատանքներ իրականացուց հոգաբարձութիւնը եւ ընդհանրապէս ի՞նչ մարտահրաւերներ կը դիմագրաւէք երկրի ներկայ ծանր պայմաններուն մէջ:

Մ.Մ.- Վարժարանի 100-ամեակին առիթով, հոգաբարձութեան ներկայ կազմը նախաձեռնեց Յուշամատենի մը պատրաստութեան:

Եան: Նախ կազմուեցաւ արխիւային յանձնախումբ, որ ժրաջան աշխատանքով օժանդակեց յուշամատենին մէջ գետեղուելիք արխիւներու եւ խմբակարներու մէկտեղման աշխատանքին:

100-ամեակի իրագործումներուն կարգին՝ 2022-ին, միջնակարգի դասարաններուն եւ դպրոցի շրջափակին մէջ գետեղուեցան կեդրոնական համակարգով աշխատող լուսանկարչական սարքաւորումներ՝ դպրոցին մէջ կարգապահութիւնն ու ուսումնական մթնոլորտը զօրացնելու նպատակով, ինչպէս նաեւ սկսան կիրարկուիլ դասաւանդման արդիական միջոցներ, մեծ խանդավառութիւն ստեղծելով աշակերտներուն մօտ: Իսկ ելեկտրականութեան տագնապի լուծման համար վարժարանը օժտուեցաւ արեւային ելեկտրածին համակարգով:

100-ամեակի ձեռնարկներուն կարգին պէտք է աւելցնել, որ 2022 տարեշրջանի ամավերջի գոյգ հանդէսներուն գեղարուեստական յայտագիրին նիւթը կը վերաբերէր Սփիւռքի Տարուան եւ վարժարանի 100-ամեակին: Աւելի ուշ, կարճ վաւերագրական տեսերիզ մը պատրաստուեցաւ եւ սփռուեցաւ, համագործակցութեամբ Լաթաքիոյ մէջ «Հայ Հորիզոն» կայքի թղթակիցին:

14-15 Հոկտ. 2022-ին, դպրոցի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով տեղի ունեցաւ Քերմէս, վարժարանի տանիքի խաղավայրին մէջ: Հարկ է յիշել, որ հակառակ վարժարանի Շրջանաւարտից Միութիւն չունենալուն, հոգաբարձութիւնը յաջողեցաւ համախմբել վերջին 15 տարիներու շրջանաւարտները, որոնք ծնողաց խորհուրդի եւ ուսուցչական կազմի կողքին սիրայօժար մասնակցեցան քերմէսի նախապատրաստական աշխատանքներուն:

29 Հոկտ. 2022-ին, շրջանաւարտները կրկին համախմբուեցան 100-ամեակին առիթով կազմակերպուած պարահանդէսին, մէկ ընտանիքի հարազատ անդամներու նման միասնաբար տօնելու այս առիթը:

12 Մայիս 2023-ին տեղի ունեցաւ ակարտական գոյգ ձեռնարկներ՝ արխիւային ցուցահանդէս եւ Յոբելիական հանդիսութիւն:

Եւ վերջապէս, մեր շատ սիրելի ծնողներու, բարերարներու եւ օտար ակերու վրայ ապրող շրջանաւարտներու սրտաբուխ նուիրատուութիւններով, մօտիկ ապագային կարելի պիտի ըլլայ ապահովել վարժարանին անունը կրող անձնական 2 փոխադրակառքեր:

Խորին շնորհակալութիւն կը յայտնենք բոլոր նուիրատուներուն, ինչպէս նաեւ մօտ ու հեռու գտնուող բոլոր շրջանաւարտներուն, որոնք նիւթական եւ բարոյական աջակցութեամբ սատար հանդիսացան մեր բոլոր նախաձեռնութիւններուն:

Ներկայիս մեր գլխաւոր մտահոգութիւնը վարժարանի երկրորդական բաժնի չունենալն է, որ իր ժխտական անդրադարձը կը թողու այլասերման ենթակայ նոր սերունդին վրայ: Ահա թէ ինչո՞ւ երկրորդական վարժարան ունենալը եղած է եւ կը շարունակէ մնալ հետապնդուող ծրագիր վարժարանի պատասխանատուներուն համար:

«Գ.»- Յուշամատենին մասին յաւելեալ ի՞նչ կը ներկայացնէք:

Մ.Մ.- 100 ամեակին առիթով Յուշամատենի մը իրատարակման աշխատանքը ընթացք առաւ վարժարանի հնամեայ արխիւները մոռացութեան ճիրաններէն փրկելու եւ պատմութեան յանձնելու առաջադրանքով:


Յուշամատենի խմբագրութեան աշխատանքը ստանձնեց դոկտ. Շողիկ Աշրգեան, որ արխիւային յանձնախումբի թաղականութեան ներկայացուցիչ անդամին հետ համագործակցաբար բժախնդրութեամբ ուսումնասիրեց Թաղական հորհուրդին քով գըտնուած նիւստերու ատենագրութիւններուն ձեռագիր մատենաները, նամակները, տոմարները, տեղեկագիրները եւ վիճակագրական տախտակները, ապա թուղթին յանձնեց այդ արխիւներէն քաղուած տուեալները, վաւերագրելու համար վարժարանին պատմութիւնը: Ասիկա առաջին Յուշամատենն է եւ իր բովանդակութեամբ կ'արժեւորէ այս կրթօճախին բեղուն վաստակը:

Այս առիթով, բի՛ւր յարգանք եւ երախտագիտութիւն իրենց անձնագոհութեամբ այս հնամեայ կաղնիին հաստատուն արմատները սնուցող բոլոր նուիրեալներուն ու խոնարհ ծառայողներուն: Բի՛ւր պատիւ անոր բոցավառ ջախը անմար պահող հին ու նոր կրթական բոլոր մշակներուն:

Նոյն հաւատքով եւ վերանորոգ ուխտով յաջող երթ կը մաղթենք մեր սիրելի վարժարանին՝ դէպի նոր հարիւրամեակ:

Հարցազրոյցը վարեց
Չարմիկ Պողիկեան

ՍՈՐՎԻՆՔ՝ ԹԵԿՈՒՋ ԹՇՆԱՄԻԷՆ



Չայկ Պաթախյան

Օրեր առաջ տեղի ունեցան Թուրքիոյ խորհրդարանական ու նախագահական զոյգ ընտրութիւնները, որոնք ի միջի այլոց, տարածաշրջանային նշանակութիւն ունեին: Անկախ առաջին փուլի արդիւնքներէն եւ երկրորդ փուլի հաւանական արդիւնքներէն, ընտրութիւնը յատկանշական էր չափազանց գնահատելի եւ նախանձելի երեւոյթով՝ ժողովրդային մասնակցութեան պատկերով:

Թուրք քաղաքացիներուն ջախջախիչ մեծամասնութիւնը մասնակցեցաւ ընտրութիւններուն: Թուրքիոյ տուեալներով՝ երկրին մէջ բնակող եւ քուէարկելու իրաւունք ունեցողներուն 88,9%-ը, իսկ արտասահմանէն 52,7%-ը: Իրապես պատկերը խօսուն էր, մանաւանդ եթէ նկատի առնենք որ ամենաժողովրդավար ու յառաջդիմած երկիրներուն մէջ անգամ (ԱՄՆ, Ֆրանսա, Աւստրիա...) այս տոկոսաւորումով մասնակցութիւններ չեն իրականանար:



Նման մասնակցութիւն կարելի է վերագրել քանի մը կետի. 1- Թուրք ժողովուրդին մօտ քաղաքացիական պարտաւորութիւններու բարձր գիտակցութիւն: 2- Երկրի ճակատագիրը որոշող ընտրութեան մէջ մասնակցելու անհրաժեշտութեան զգացում ու ըմբռնում: 3- Ազգային-հասարակական կեանքի մէջ դերակատարութիւն ունենալու ցանկութիւն:

Այստեղ հարկ է թարմացնել մեր յիշողութիւնը եւ վերլուծել հայրենի երկրի 2021-ի արտակարգ խորհրդարանական ընտրութիւնները, բաղա-տուութիւն մը կատարելու եւ եզրակացութեան մը հասնելու համար: Այդ օրերուն, 44-օրեայ մարտին պարտուած մեր երկրէն ներս իրականացաւ վաղաժամ խորհրդարանական ընտրութիւն, ցանկալի քաղաքական փոփոխութեան լաւագոյն առիթը ընծայելով ժողովուրդին: Անկախ յուսախաբութիւն պատճառող արդիւնքէն, ընտրութեան ժողովրդային մասնակցութեան տոկոսաւորումն էր 51%:

Այդ պատկերը մասամբ կը բացատրէր նաեւ մեր պարտութեան պատճառներէն մէկը, որն էր մեր ժողովուրդին զգալի մասին, որպէս պատասխանատու քաղաքացի, անհոգութիւնն ու անպատասխանատուութիւնը հայրենիքին ու պետութեան հանդէպ: Բնականաբար ժողովուրդին կողքին իրենց պատասխանատուութիւնը ունեին Հայաստանի յաջորդական իշխանութիւնները, որոնք ընտրութիւնները դարձուցած էին իրենց սեփական «խաղաղիքը» եւ նսեմացուցած անոր իսկական արժեքը, որուն հետեւանքով ալ քաղաքացին անտեսած էր իր պարտականութիւնը որպէս քուէարկող:

Պարտութեան յաղթահարումը այստեղէն ալ կը սկսի (եթէ տակաւին տրամադիր ենք յաղթելու): Հարկ է իւրաքանչիւր հայու համոզել, որ իր քուէարկութիւնը ազդեցիկ է, որ ինք կրնայ իր ազգին կեանքէն ներս դերակատարութիւն մը ունենալ ու հարկ եղած պահուն, իրավիճակը յեղափոխել եւ յեղաշրջել: Այս մասին պէտք է բարձրաձայն խօսիլ՝ իւրաքանչիւրին մէջ ամրապնդելու այն հաւատքը, որ իրմով ալ կրնայ սկսիլ, իրմով ալ կըրնայ մղում ստանալ հայրենիքին յառաջընթացը եւ ոչ թէ հակառակը, այլապէս որքան ալ նուաճումներ արձանագրենք որպէս անհատներ, եւ որքան ալ սարեր բարձրանանք որպէս «ես»-եր, հաւաքականօրէն միշտ ալ պիտի մնանք յաղթուած եւ ձորերու մէջ կորած:

ՆԱԽԱԳԱՀ ԱՍՍՏ...

Սկիզբ՝ էջ 1


Այստեղ կարելի էր կրնարուի Արաքական Լիկային դերը՝ քննարկելու եւ լուծումներ որոնելու գնահատան հարցերու, պայմանաւ որ մեր երկիրները զարգացնեն իրենց աշխատանքային համակարգը, ըսաւ նախագահը:

Ապա անցնուց. «Արաքական Միացեալ աշխատանքը կարիք ունի միացեալ ռազմավարութեան եւ նպատակներու, որոնք հետագային գործնական ծրագիրներու կը վերածուին: Ան կարիք ունի նաեւ միասնական քաղաքականութեան եւ կայուն սկզբունքներու: Այդ ատեն մենք դէպքերուն հակադարձելու փոխարէն կրնանք կանխատեսել զանոնք: Այդ ատեն Արաքական Լիկան ելք կրնայ դառնալ որքէն տնտեսական պաշարումն է անպատասխան՝ թշնամական գոռիներէ»:

Նախագահ Ասատ անդրադառնալով տարածաշրջանի հարցերուն, ըսաւ. «Կարելի չէ հիւանդութիւն մը բուժել անոր ախտանշանները բուժելով: Տարածաշրջանին մէջ ստեղծուող տագնապները, սկսեալ Լիպիայէն, անցնելով Եմանէն, Սուտանէն եւ հասնելով Սուրիա, Նախագահ անլոյծ մնացած հարցերու արդիւնք էին: Այդ հարցերէն ոմանց լուծումը կը պահանջէ տասնամեակէ մը առաջ արաքական միջավայրին մէջ ստեղծուած ճեղքերու վերացումը եւ Արաքական Լիկայի դերին վերականգնումը, ոչ թէ վերքերու խորացումը: Ուստի հարկ է ժողովուրդներու ներքին հարցերուն

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Աստուրեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝



ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՄԱՐԻ ԱՍՏՈՒՐԵԱՆԻ (Ծնեալ՝ ԳԱՊԱԳԼԵԱՆ)

մահուան սուգին: Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 28 Մայիս 2023-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Հայ Կաթողիկէ Ս. Խաչ Եկեղեցոյ մէջ, Ազգիէ-Հայէպ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Գարամանեան ընտանիքը խոր կսկիծով կը գուժէ իր գաւկիսն՝



ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԱԼԵՔՍ ՎԱՉԷ ԳԱՐԱՄԱՆԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Հայէպ 24 Ապրիլ 2023-ին, ցնցելով իր հարազատներն ու բարեկամները: Այնքա Վաչէն եղած է ժրջան արհեստաւոր (արամանդագործ), հաւատացեալ, արուեստասէր եւ բազմա-տաղանդ երիտասարդ մը: Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 28 Մայիս 2023-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագին, Հայ Կաթողիկէ Մայր Օգնութեան աթոռանիստ Եկեղեցոյ մէջ, Թիլէ-Հայէպ: Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին Հայ Կաթողիկէ Առաջնորդարանի դահլիճը:

ՓՈՑԻՆԵԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆ...»

Սկիզբ՝ էջ 1

ճան պատրաստ է ճանչնալու Հայաստանի Հանրապետութեան 29, 800 քառ. քմ. տարածքային ամբողջականութիւնը: Եթէ մենք այս հարցին մէջ Ատրպէյճանի հետ ճիշդ կը հասկնանք գիրար, Հայաստան, այո՛, կը ճանչնայ Ատրպէյճանի 86, 6 հազար քառ. քմ. տարածքային ամբողջականութիւնը՝ այն ըմբռնումով, որ Ատրպէյճան կը ճանչնայ Հայաստանի 29, 800 քառ. քմ. տարածքը», ըսած է Փաշինեան:

Լեռնային Ղարաբաղի հայութեան իրաւունքներու եւ անվտանգութեան հարցը պէտք է քննարկուի Ստեփանակերտ-Պաքու երկխօսութեան ձեւաչափին մէջ: Վարչապետը շեշտեց, որ հայկական կողմը կարելի էր համարէ այդ բանակցութիւններու միջազգային երաշխիքներուն ստեղծումը: «Նկատի ունիմք, օրինակ, որ կրնայ Լեռնային Ղարաբաղի հայութեան իրաւունքներու անվտանգութեան հարցը ուղղակի մոռացութեան մատուցել, եւ Ատրպէյճան շարունակէ ուժային լծակի գործադրումով Լեռնային Ղարաբաղի հայութեան ցեղային գտման եւ ցեղասպանութեան քաղաքականութիւնը», ըսաւ Փաշինեան՝ շեշտելով, որ կարելի էր համարեն երաշխիքներ այն մասին, որ այդ քաղաքականութիւնը պիտի չչարունակուի:

Անդրադառնալով այն հարցին, թէ արդեօք տարածքային ամբողջականութիւնը կը ներառէ՞ անկլաւները՝ վարչապետը դրական պատասխան տուաւ: 29, 800 քառ. քմ. -ի մէջ անկլաւները նոյնպէս կը մտնեն, անոր մէջ կը մտնէ նաեւ Արծուաշէնը: 86, 600-ի մէջ այդ հաշուարկներով կը մտնեն նաեւ անկլաւները: «Սա քաղաքական դիրքորոշում է, բայց հարցի իրաւական մասը դեռ պէտք է դիտարկել ու նայիլ», ըսաւ Փաշինեան:

չմիջամտել, որովհետեւ իւրաքանչիւր ժողովուրդ իր երկրին ներքին հարցերը լուծելու ունակ է, իսկ մեր պարտքն է արաքական ներքին հարցերուն արտաքին միջամտութիւնը կանխել եւ օգնութեան կարիք ըլլալու պարագային գիրար օժանդակել»:

Նախագահ Ասատ անդրադառնալով Սուրիոյ դերակատարութեան ըսաւ. «Սուրիոյ անցեալը, ներկան եւ ապագան արաքականութիւնն է, պատկանելիութեամբ բնորոշուող արաքականութիւնը: Սուրիան արաքականութեան սիրտն է, անոր սրտին մէջն է»:

Եզրափակելով իր խօսքը նախագահը ըսաւ. «Այս պահուն, երբ կը գումարենք այս գագաթնաժողովը, փոթորկալից աշխարհին մէջ յոյս կը յառաջանայ ի տես համա-արաքական, տարածաշրջանային եւ միջազգային մերձեցումներուն, որոնք մէկ արտայայտութիւնն է այս ժողովը: Յոյսով եմ, որ այս ժողովը կը դառնայ համա-արաքական գործակցութեան նոր փուլի սկիզբ, իսկ տարածաշրջանին մէջ պատերազմներն ու լարուածութիւնը փոխարինող համերաշխութեան եւ խաղաղութեան ազդակ»:

Ապա նախագահը իր խորին շնորհակալութիւնը յայտնեց պատուիրակութիւններու ղեկավարներուն, որոնք արտայայտեցին իրենց աջակցութիւնը Սուրիոյ, ապա շնորհակալութիւն յայտնեց Սեւտական Արաբիոյ թագաւորին՝ տարածաշրջանի երկիրներու հաշտութեան նպաստելու իր նշանակալի դերին ու աջակցութեան, ինչպէս նաեւ սոյն գագաթնաժողովի յաջողութեան սատարելու համար:

Պրիսմակետ

ԹՕՓՃԵԱՆՆԵՐԸ



Մարուշ Երամեան

Թօփճեանները յոգևակի մարդիկ են, ոչ միայն որովհետեւ անոնց նախնին, որուն կրցեր ենք հասնիլ՝ Ֆիլիպի Թօփճեանը երեք կիներ ունեցեր է՝ Լուլուս, Անթան եւ Մեծիտիէն, որոնց երեքին շանքերով ծներ են վեց մանչեր եւ երկու աղջիկներ, այլ նաեւ որովհետեւ անոնք սիրած են կեանքը



լայնօրէն ապրիլ, ցմրուր ըմպելով քաղցրութիւնն ու դառնութիւնը միաժամանակ, ճիշդ սեւ տուրփին պէս՝ դառն, բայց անկարագրելիօրէն համեղ:

Թօփճեանները յոգևակի են նաեւ անոր համար, որ անոնց ապրած կեանքը, - գոնէ անոնցմէ ոմանց ապրած կեանքը կրնայ անիրական թուիլ,

իւնչպէս եղած է կեանքը շատերու, որոնք անցած են Զամաշխարհային Ա. Պատերազմի դժոխքէն: Այդպէս են Ֆիլիպի Թօփճեանին եւ անոր ամենէն կրտսեր տղուն՝ Արմենին կեանքերը:

Ֆիլիպին առաջին երկու կիները մահացեր են. երրորդ կինն ալ կըրնար իրմէ առաջ մահանալ, համոզուած է Ֆիլիպի Թօփճեանը, եթէ այդ քահանան ...

-Անիծուի՛ այդ գողը, - կը մոնչէր Ֆիլիպի ցաւերուն մէջ: Երկու շաբաթ առաջ սերժանթ Ֆիլիպը եկեր էր հեւալով, բաճկոնին կոճակները բաց, վրան գլուխը փոշի, անկողին ինկեր եւ ա՛լ չէր ելեր:

Ֆիլիպի Թօփճեանը կը զգար, որ պիտի մեռներ, այս անգամ ի՛նչ պիտի մեռներ կնոջմէն առաջ, եւ ատիկա ոտքի ցաւին չափ խորունկ եւ մեծ ցաւ կը պատճառէր իրեն:

Չիքս դէպի մահ քաշողը ոտքը չէր, որ օրէ օր կը փտեր, այլ՝ քահանան:

-Շան որդի տերտերը անիծեց, - կ'ըսէր ակռաները ցաւէն սեղմելով, - եւ քանի տերտեր է, Աստուած իրեն մտիկ կ'ընէ, թէեւ ե՛ս եմ իրաւունքովը:

Սերժանթ Ֆիլիպը գող քահանան հալածեր է Սալիպիի նեղ թաղերէն մինչեւ գերեզմաններու ամայքը, որ շատ ծանօթ վայր էր քահանային համար, իսկ սերժանթին՝ խորշելի: Զոն է, որ ոտքը տապանաքարի մը զարկեր ու հասակով գետին փռուեր է, մինչ քահանան կծիկը դրեր է, բախտը օրհնելով:

-Անիծեց ... Ոտքի ելլեմ, ցոյց կու տամ այդ շան որդիին ի՛նչ ըսել է գողնալը...

-Մեքը ունի, մարդ Աստուծոյ, կը բաւէ, - կ'ըսէր աստուածավախ ու եկեղեցասեր կինը, որ ամէն Կիրակի չորս գաւակները հաւաքած եկեղեցի կ'երթար:

Բայց ոչ այս Կիրակի: Ֆիլիպին վիճակը ծանրացեր է. աչքերը փակ են, բայց կոպերը ցաւէն կը թրթռան: Տասնապետը, որ նաեւ սենեկապանի դեր կը կատարէ, աֆիոնի գլանիկ մը փաթեթը, վառեր եւ մեծաւորին բերանը դրեր է. ցաւը թեթեւցնելու ամենէն արագ միջոցն է. ու երբ գլանիկը իյնայ սերժանթին շրթունքներէն, տասնապետը կը հասկնայ, որ երկու ժամ գոնէ ցաւ պիտի չզգայ իր մեծաւորը:

Անիթան անկողինը դրեր է բակը, լեմոնի ծառին տակ, փոքրիկ աւագանէն քիչ մը անդին. թէեւ գիտէ, որ ամուսինը կը սիրէ լիվանին մէջ երկնալ, բայց գիտէ նաեւ, որ լեմոնին ծաղիկներուն հոտը «սիրտ կը բանայ»:

Երեք տղաքը լիվանին անկիւնը քաշուեր են. չեն խաղար. կը սպասեն, որ մայրիկը հրաման տայ քովի բակը երթալու: Զայրիկին «պառկելէն» ի վեր Անիթան աւելի թոյլատու դարձեր է. ամէն անգամ, որ սերժանթը արթննայ եւ տասնապետը կանչէ, Անիթան աչք-ուրնքով գաւակները դուրս կը դրկէ, դրացիներուն բակը, ուր կիները գիրենք անսովոր գուրգուրանքով կը պահեն:

Ի՛նչ գողցեր էր քահանան, մոռցուեր է. ինչո՞ւ օսմանեան բանակի հայ սերժանթ Ֆիլիպը անպայման կ'ուզէր բռնել գինք, այդ ալ մոռցուեր է: Եւ մնացեր է մահը, որ վերջ պիտի դնէ ոչ միայն սերժանթ Ֆիլիպին կեանքին, այլ իր ամուսնութիւններու շարանին:

Ո՞վ պիտի խնամէր եօթ մանչերն ու միակ աղջիկը. Անիթա՞ն. բայց ինք եւս կը մեռներ ամուսինէն քիչ տեք: Արդէն առաջին կնոջ երկու մանչերը՝ Կարապետն ու Խոսրովը հասուն երիտասարդներ են. Նոյնքան հասուն է երկրորդ կնոջ՝ Լուլուին մանչը՝ Բարսեղը: Անիթային տղաքն են որ մատ մըն են տակաւին եւ խնամքի կարօտ:

Անիթան տիրութեամբ նայեցաւ գաւակներուն, մինչ երեք տղաքը իրենց քրոջ ձեռքէն բռնած արտորանքով բակէն դուրս կ'ելլէին. վագեց անոնց ետեւէն ու փսփսալով ըսաւ մեծին՝ Գրիգորին, արաբերէն.

-Չուշանաք. տասնապետը կը դրկեմ, անմիջապէս կու գաք: Զալէպ ծնած մեծցած Անիթան հայերէն չէր գիտեր. այդ օրերուն ո՞ր հայը հայերէն գիտեր, կամ տան մէջ հայերէն կը խօսեր. բոլոր Տօքսէճիները, Էքսէքճիները, Ֆաթթալները, Նահասները եւ մնացեալ ինչ հայերը Սուրբ Գրիգը արաբերէն կը կարդային, եւ Քառասնից Մանկանցին մէջ արաբերէն պատարագ կը լսէին:

-Եկեղեցին կնիկներուն գործն է, - կ'ըսէր սերժանթ Ֆիլիպը եւ Կիրակի առտունները սրճարան կ'երթար, - Երիկմարդ ըսածդ գէնք վերցնող պիտի ըլլայ:

Տան մէջ գտնուող ամենէն ինչ նկարին մէջ սերժանթ Ֆիլիպը կը հաստատէ, որ այս «մաքուր» բաժանումը կնիկ-երիկմարդ գործերու միայն խօսք չէ, այլ համոզում է եւ ապրելակերպ. պէտքերուն ծայրերը դէմքէն դուրս երկարած, մեծ գէնք գիրկը եւ աչքերը կարեւոր կետի մը լարած, սերժանթ Ֆիլիպը իրապէս եկեղեցի գացողի պիչիմէնը:

Օր մըն ալ Անիթան կիրակնօրեայ գգեստները հագցուց գաւակներուն եւ տարաւ եկեղեցի, ուր իրենց հայրը, իր ամբողջ շքեղութեամբ կը քնանար փայտէ նեղ անկողինի մը մէջ:

Մեծը՝ Գրիգորը, (իմ մօրենական մեծ հայրիկս, որուն տեսած չեմ դժբախտաբար) յաճախ պիտի յիշէր այդ պահը, իր խորունկ ուրախութիւնը՝ հայրիկը լաւացեր է եւ ի՛նչ հանգիստ կը քնանայ, յետոյ Նոյնքան խորունկ զարմանքը՝ բայց ինչո՞ւ հոս է, ինչո՞ւ տուն չի գար ... Երկարատեան պիտի փնտռէ հօր խոժոռ ներկայութիւնը, բամբ ծայրը եւ իրենց վախը ի լուր թաղին մէջ արծազանգող անոր ոտնաձայներուն:

Տարիներ ետք հեռաւոր եւ անծանօթ մնացած զարմիկ մը պիտի կագւմէր Թօփճեաններուն տոհմածառը եւ հոն նշէր Ֆիլիպին մայրը: Բայց ո՞վ էր հայրը, ուրկէ՞ Զալէպ հասեր էր, այդ օրերուն ո՞ր էին ընտանիքին մնացեալ անդամները, որոնք շատ հաւանաբար թիւ պիտի կագւմէին մէկ ու կէս միլիոնին մէջ:

Կարապետ էր հայրը ... թերեւս. թէ ոչ ինչո՞ւ Ֆիլիպը իր անդրանիկ մանչը Կարապետ պիտի կոչէր, եւ վերջին գաւակին, միակ աղջկան պիտի տար մօր անունը՝ Մարիամ:

Մնացեր են երկու խմբակարներ սերժանթ Ֆիլիպին «անմահութիւն» ապահովող. եւ մնացեր է թոռնիկներէն մէկը, որ իր անունը կը կրէ հպարտօրէն՝ Ֆիլիպի Թօփճեան կրտսեր, մեծ Ֆիլիպին ամենէն փոքր մանչուն՝ Արմէն Թօփճեանին միակ գաւակը:

Իսկ Արմէն Թօփճեանը ... Անոր պատմութիւնը այլ խորք եւ տարածք ունի: Յետոյ կը պատմեմ:

Մեհիթաբի...

Սկիզբ՝ էջ 4

գին է (Տես Ա.Կր 12.11): Ան հոգեւոր պարգեւներ առատապէս կը բաշխէ որպէսզի Տիրոջ փառքը հռչակուի, գորութիւնը յայտնուի, կամքը բացառապէս խորհուրդը ծանուցուի, ճշմարտութիւնը հաստատուի, առաքիւնի ապրելակերպին կարեւորութիւնը շեշտուի, հոգեւոր պաշտամունքին ուղին պարզուի եւ Աստուծոյ որդեգրութեան շնորհքը ընկալելու սուրբ գործը իր կատարումին հասնի:

Յոգին մշտագոյ ելութիւն է, Զօրը եւ Որդին հետ կը պաշտուի որպէս Աստուած: Անբաժանելի սուրբ Երրորդութեան երրորդ Անձն է Ան: Երկըրպագելի է իր աստուածութեամբ եւ կը մեծարուի իր հրաշագործ գորութեամբ:

«Անդիւր անսպառնելի», «բաշխող շնորհաց», «Անքննելի», նման բնորոշումներով Զայ Առաքելական Եկեղեցւոյ շարականագիր հայրերը վայելուչ փառաբանութիւն եւ օրհներգութիւն ընծայած են Սուրբ Զոգիին՝ մասնաւորելով Անոր գործունէութեան երեսները:

Աստուածաշունչը Սուրբ Զոգին Աստուած կը կոչէ (Տես Բ.Թգ 23.2-3: Գրծ 5.3-5 եւ Ա.Կր 3.16):

4. Պոլսոյ տիեզերական ժողովը, հայրապետներու մասնակցութեամբ «Զաւատամբ»-ին մէջ շեշտեց Ս. Զոգիին «Անեղ» ըլլալը, որ կը նշանակէ եղած չէ, ստեղծուած մը կամ արարած մը չէ:

Սուրբ Զոգին նաեւ ինք կը կառավարէ եկեղեցին: Լուսահոգի Չարեհ Արք. Ազնաւորեան կ'ըսէ. «Եկեղեցւոյ ծիսական կեանքը ամբողջութեամբ Սուրբ Զոգիին առաջնորդութեան յանձնուած է»:

Զեռեւաբար մենք հաւատքով կը դաւանինք եւ ճշմարտապէս կը խոստովանինք ամենասուրբ Երրորդութիւնը, որուն երրորդ Անձն է Սուրբ Զոգին: Ս. Գրիգոր Լուսաւորիչ Զայրապետ խօսելով Սուրբ Երրորդութեան մասին կ'ըսէ. «Երեք կատարեալ անձեր, մէկ կատարեալ կամք. անպատմելի եւ անքննելի է Երրորդութեան միութիւնը. մէկ իսկութիւն է, մէկ ելութիւն, մէկ աստուածութիւն՝ Զայր եւ Որդի եւ Զոգի Սուրբ, երեք անձեր մէկ աստուածային գորութիւն»:

Կարիքը ունինք Սուրբ Զոգիին, յատկապէս երբ կ'ընդունինք թէ Արքայութեան բնակիչ դառնալու իրաւորուած ենք: Ուրեմն մեր քրիստոնէական կեանքը արժեւորած կ'ըլլանք երբ Տիրոջ Սուրբ Զոգիին կրակը ներգործէ մեր մէջ. այն առեւն հոգեւոր պաշտամունք կը մատուցենք, կեղծ «աստուածները» կը մերժենք, մեղքի աղտեղութենէն կը մաքրուինք եւ շերմեանալ հոգիով կ'ապրինք:

Պօղոս առաքեալը կ'ըսէ. «Սուրբ Զոգիին կրակը մի՛ մարեք ձեր մէջ» (Ա.Թս 5.19):

«Ան որ ականջ ունի՝ թող լսէ թէ Զոգին ի՛նչ կ'ըսէ եկեղեցիներուն» (Յյտ 3.13):

ԼԱԹԱՔԻՈՅ 100-ԱՄԵԱՅ ԱՉԳ. ՍՐԲՈՑ ՆԱՅԱՏԱԿԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ՇՔԵՂ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՄԲ ԱՐՏԱՑՈՒԼԱՅ ԴՊՐՈՑԻՆ ՀԱՅՆԱԿԵՐՏՄԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Լաթաքիոյ Ազգ. Սրբոց Նահատակաց վարժարանը հիմնուած է Հայոց Յեղասպանութեան յաջորդող, նոր գաղութի կազմաւորման տարիներուն, դառնալով հայութեան վերապրումի հիմնական դարբնոցը: Հարիւր տարի շարունակ գարգանալով որպէս կառոյց, ուսումնական հաստատութիւն եւ հայապահպանման օջախ, անոր մատենաը հարստացուցած են հայ դպրոցի առաքելութեան հաւատացող նուիրեալներ, ծառայողներ, կրթական մշակներ, տնօրէններ, հոգաբարձուներ, բարերարներ, վարչական պատասխանատուներ եւ շրջանաւարտ հունձքեր:

Այս բոլորը վերակենդանացնելու եւ նորահաս սերունդին որպէս պատմութիւն ու պատգամ հրամցնելու համար վարժարանի հոգաբարձութիւնն ու տնօրէնութիւնը կազմակերպած էին վարժարանին 100-ամեայ հանդիսաւոր յորելեանը, որ անցաւ հանդիսութեան մը տոկակական սահմանները եւ լուսարձակի տակ բերաւ վարժարանին պատմութիւնը, դերը, ինչպէս նաեւ այս առիթով հրատարակուած Յուշամատենը:

Արդարեւ, Ուրբաթ, 12 Մայիսին, հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, տեղի ունեցաւ վարժարանի 100-ամեակին նուիրուած յորելեանական հանդիսութիւնը:

Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդին կողքին հանդիսականներուն մաս կը կազմէին՝ Բերիոյ Հայոց Թեմի յարաբերական մարմնի ներկայացուցիչ Վրէժ Եագուպեան, Լաթաքիոյ ներկայացուցիչ Յարութ Գաբրիելեան, Լաթաքիոյ եւ Ծովափնեայ շրջանի հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վազգէն Ա. Քհնյ. Զեօշկերեան, Զեսապի հոգեւոր տեսուչ Հոգշ. Տ. Անդրանիկ Վրդ. Քիւրիմեան, Հոգշ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեան, Ազգ. Երեսփոխանական ժողովի,

Լարտները խոստացան մշտապէս հաւատարիմ մնալ վարժարանին ու ներուկ կանգնիլ անոր:

Այս առիթով հակիրճ խօսք արտասանեց նաեւ վարժարանի պետական տնօրէնուհի Պատրիէ Խընտըր ալ-Սալէմ: Ան յայտնեց, որ հայեր գրկաբաց ընդունուեցան սուրիացի ժողովուրդին կողմէ ու որպէս լիիրաւ քաղաքացիներ մասնակցեցան Սուրիոյ բարգաւաճման աշխատանքներուն, միեւնոյն ատեն պահելով իրենց լեզուն, դպրութիւնն ու մշակոյթը: Ապա շնորհակալութիւն յայտնեց կրթական մշակներուն, դաստիարակներուն եւ վարչական պատասխանատուներուն, որոնց միասնական ճիգերով վարժարանը պիտի շարունակէ իր գոյերթը՝ առողջ ու գիտակից շրջանաւարտ հունձքեր հասցնելու:

Ներկայացուցեցաւ վարժարանի հարիւրամեայ պատմութիւնը ներկայացնող տեսանիւթ մը, ուր լուսարձակի տակ առնուեցան հիմնադիր դէմքեր եւ վարժարանի կառուցային եւ ուսումնակրթական գարգացման փուլեր:

Դաշնակախար Սօսի Գոչեան-Կարպուշեան դասական երաժշտութեան գեղեցիկ ստեղծագործութեամբ, տպաւորիչ կատարումով շերմացուց սըրտերը:

Մերթ ընդ մերթ ընթերցուեցան այս առիթով առաքուած շնորհաւորագրերը:

Օրուան բանախօսն էր պատմական գիտութիւններու դոկտ. Շողիկ Աշրգեան, որ միեւնոյն ատեն հեղինակն էր վարժարանի հոգաբարձութեան ջանքերով այս առիթով հրատարակուած Ազգ. Սրբոց Նահատակաց վարժարանի հարիւրամեայ պատմութեան Յուշամատենին:



Ազգ. Վարչութեան եւ Ուսումնական Խորհուրդի ներկայացուցիչներ, ՍՕ Խաչի Շրջ. Վարչութեան ատենապետուհին եւ լաթաքիահայ միութիւններու, Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղականութեան, Զեսապի Ազգ. Միացեալ վարժարանի հոգաբարձութեան եւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղականութեան ու Պատկան Մարմնի ներկայացուցիչներ, Լաթաքիոյ վարժարանի հոգաբարձութիւնն ու հրաւիրեալներ:

Հանդիսութեան բացումը կատարեց վարժարանի տնօրէնուհի Հուրի Տէյրմէնճեան-Գարամարտեան, որ նախ ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան յոտնկայս յարգելու Սուրիոյ, Հայաստանի ու Արցախի նահատակներուն յիշատակը, ապա շեշտեց, որ վարժարանը իր հիմնադրութեան օրէն յոյսի եւ լոյսի ջահը փոխանցած է լաթաքիահայ սերունդներուն, կերտելով ուսեալ, գիտակից, հայրենասէր ազգայիններ: Ան կոչ ուղղեց վարժարանի շրջանաւարտներուն առողջ ու կանգուն պահելու դպրոցը, որովհետեւ իւրաքանչիւր հայ պարտաւորութիւն ունի ազգին միջնաբերդին՝ հայ դպրոցին նկատմամբ:

Այնուհետեւ տնօրէնուհին բեմ հրաւիրեց 1983-ի շրջանաւարտ անգլերէն լեզուի մասնագետ, թարգմանիչ Գոհար Ներսէսեանն ու 1985-ի շրջանաւարտ երկրչի. Թովմաս Մանճեանը՝ ներկայացնելու վարժարանի շրջանաւարտներու խօսքը: Անոնք ներկայացուցին վերապրած հայերու համեստ պայմաններուն մէջ հիմնուած այս օջախին հիմնադրութեան, վերանուանումին, գոյատեւման լուսաւոր ուղին ու շեշտեցին, որ ան եղած է գաղութի միասնութեան խորհրդանիշը, իսկ անոր հնամեայ կառոյցին մէջ կազմուած է շերմ ու ներդաշնակ ընտանիք մը՝ վարժարանի մեծ ընտանիքը: Շրջանա-

Աշրգեան լուսարձակի տակ առնելով հայ դպրոցին դերը ըսաւ.

«Հայ դպրոցը մտքորպաստեղծ տաճար է, անառիկ բերդ է, մարդկային պաշարներու անսպառ շտեմարան է: Ուսումնարան եւ կրթարան է միաժամանակ: Հարիւրամեակ մը կ'ելնադրէ 100 տարիներու յաղթերգութիւնն ու լինելիութիւն: Կ'արժէ պանծացնել դարու մը աւանդն ու ժառանգութիւնը: Աւանդը կը փոխանցուի, ժառանգութիւնը կը հարստացնէ: Ահա թէ ինչո՞ւ օրը տօնական է, պահը՝ հանդիսաւոր, առիթը՝ յորելեանական, ուրախութիւնը՝ համընդհանուր, հանդիսութիւնը՝ հպարտութիւն առթող ու անկրկնելի»:

Անդրադառնալով Լաթաքիոյ հայ գաղութի կազմութեան բանախօսը ըսաւ, որ Մեծն Տիգրան, ՔԱ 83 թուականին կառուցած է Լաթաքիոյ Նաւահանգիստը: Այդ թուականին հետ կը կապուի նաեւ հայերու առաջին ներկայութիւնը Լաթաքիա: Աւելի քան 20 դար ետք, Կիլիկիայէն, Հայաստանի տարբեր քաղաքներէն տեղահանուած ու գաղթական հայեր եւ Յեղասպանութենէն վերապրած տեղաբնիկ հայեր այս անգամ կը հիմնեն իրենց սերունդներուն ինքնութիւնը պահպանելու կոչուած Նաւահանգիստը՝ Ազգ. Ս. Յակոբեանց Երկսեռ վարժարանը, որ ըլլալով կրթական յատուկ ծրագիրով ուսումնական հաստատութիւն, պիտի տարբերէր նախքան Մեծ Եղեռն եկեղեցւոյ հովանիին տակ գործած հայերէն կարգաւ- գրել սորվեցնող Ազգ. վարժարանէն:

Ապա դպրոցի ներկան հիմնադրութեան օրուան հետ կամրջելով անդ-

ԼԱԹԱՔԻՈՅ 100-ԱՄԵԱՅ...

Սկիզբ՝ էջ 8

րադարձաւ վարժարանին կենսագործութեան, արժեւորեց անոր հայապահպանման ու հայակերտման վաստակաշատ աշխատանքը, որ տարած են կրթական ասպարեզին նուիրուած՝ բազում ուսուցիչ- ուսուցչուհիներ եւ տնօրէններ:

Բանախօսը առանձնաբար անդրադարձաւ դպրոցի առաքելութեան, գաղութի բոլոր ժամանակներու լուսամիտ ու հեռատես դեկավարութեանց, պատասխանատուներուն համագործակցութեան ոգիին ու դպրոցի գարգացման նպաստող համախոհ աշխատանքին, 21-րդ դարուն հայ դպրոցին եւ աշակերտին դիմաց ցցուած մարտահրաւերներուն, Հարիւրամեակին առիթով վարժարանի Հոգաբարձութեան մտայղացմամբ Յուշամատենակի հրատարակման եւ հարիւրամեակին նուիրուած հանդիսութեան խորհուրդին:

Եզրափակելով Ազգեան ըսաւ. «Այնքան ատեն որ Հայ դպրոցը կայ ու կը գործէ, անմահ է Ս. Մեսրոպ Մաշտոցը: Եւ այնքան ատեն որ Ս. Մեսրոպ Մաշտոցի լեզուն կը հնչէ՝ կ'ապրի՝ հայր»:

Այս առիթով շրջանաւարտներէ կազմուած յատուկ պարախումբը ելոյթ ունենալով մերթ հեզ աճկուն, մերթ խրոխտ շարժումներով ներկայացուց «Նազ պար» եւ «Հայ Չինուոր» պարերը, գեղ. դեկավարութեամբ շրջանաւարտ Բալիկ Գաբթանեանի:

Գեղարուեստական յայտագիրը հարստացուցին նաեւ Ճեյմս Պետրեան, ասմունքելով Մուշեղ Իշխանի «Հայ Հոգին» քերթուածը, Դալար Սեբեթեան-Մեյխանաճեան, ասմունքելով Ժագ Յակոբեանի «Հայկա՛կ, Ձե՛ռք Առ Հայերէն Գիրք» քերթուածը եւ Ներսէս Մուրատեան մենեթելով հաջատուր Ալետիսեանի «Բարի Արագիլ»-ը, դաշնամուրի ընկերակցութեամբ Սիմոն Սարաֆի:

Վարժարանի հոգաբարձութեան խօսքը ուղղեց հոգաբարձութեան ատենապետ Մեդրիկ Ապահունի-Մանճեան ու ըսաւ. «Վարժարանի մը հարիւրամեայ երթը կ'ենթադրէ պողպատեայ կամք: Դեռ ասելին. անոր առաքելութեան հաւատացողներէն կը պահանջէ մարտահրաւերներ դիմագրաւելու պայծառատեսութիւն, իսկ հաւատաւոր եւ ժիր մտքի մշակներէն՝ գերագոյն ճիգ եւ ծանրակշիռ աշխատանք: Հայապահպանում, ազգապահպանում, մարդակերտում եւ հայեցի դաստիարակութիւն. վսեմ այս նպատակներուն կառչած մնալու հայու հաւատքն է, որ դար մը ամբողջ անխախտ պահած է մտքի այս ամրակում տաճարը: Բի՛ւր յարգանք բոլոր նուիրեալներուն ու խոնարհ ծառայողներուն»:

Հանդիսութեան ւարտին Հոգեջ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեան ընթերցեց ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսին սրբատառ կոնդակը վարժարանի 100-ամեակին առիթով:

Այս առիթով հոգաբարձութիւնը վարժարանի տնօրէն Հուրի Տեյիբմենճեան-Գարամարտեանը խորհրդանշական յուշանուէրով մը պարգեատարեց՝ վարժարանէն ներս իր երկարամեայ ծառայութեան համար, ծեռամբ սրբազան հօր եւ հոգաբարձութեան ատենապետին: Տնօրէնուհին շնորհակալութեան խօսք ուղղեց սրբազան հօր, հոգաբարձութեան, ապա նաեւ կրթական մշակներուն՝ համագործակցաբար վարժարանը յառաջ տանելու աշխատանքին ի նպաստ անոնց ճիգերուն համար, ինչպէս նաեւ իր ծնողքին եւ ամուսինին, որոնք զինք քաջալերած են տււաբար:

Ապա տեղի ունեցաւ Ազգ. Սրբոց Նահատակաց վարժարանի այս առիթով հրատարակուած Յուշամատենակի գինեճօնը:

Օրուան եզրափակիչ պատգամը ուղղեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդը:

Սրբազան Հայրը դիտել տուաւ, որ Յեղասպանութենէն ճողոպրած, սփիւռքեան տարածքին ցիր ու ցան եղած, թիթեղաշէն տնակներու մէջ ապրած, դժուարութիւններու, տագնապներու եւ մարտահրաւերներու դիմաց պայքարելով իրենց օրապահիկը ապահոված հայորդիներ ճիգ ու ջանք թափելով նման վարժարան մը հիմնեցին, հետեւաբար անոր 100-ամեակի յիշատակումը ճշմարտապէս հրաշքի համագործակցութեամբ իրականութիւն մըն է:

Մակար Սրբազան հաստատեց, որ հայ ժողովուրդը ասպնջական արար ժողովուրդին մօտ ընդունելութիւն եւ ապահովութիւն գտաւ, սկսաւ իր ճակտի քրտիկներով եւ արժանապատուութեամբ աշխատիլ, իսկ աշխատանքի իր ամենակարեւոր բաժինը յատկացուց եկեղեցւոյ եւ դպրոցի հիմնադրութեան, որովհետեւ միայն եկեղեցւոյ եւ դպրոցին ճամբով կարելի էր Սփիւռքի տարածքին հայուն հաւատքը, հոգին եւ ազգային նկարագիրը անաղարտ պահել:

«Եկեղեցին մեր հոգեւոր ծննդավայրն է, իսկ հայ դպրոցը՝ մեր իմացական եւ մտաւորական ծննդավայրը, ուր կը ստանանք հայեցի դաստիարակութիւն»:

Այս հաստատելով Մակար Սրբազան ներկաները հրաւիրեց գուրգուրալու հայ դպրոցին, կարողալու հայերէն գիրք եւ խօսելու հայերէն: Եզրափակելով, սրբազան հայրը մաղթեց, որ 100-ամեակը Ազգ. Սրբ. Նահատակաց վարժարանին համար նոր սկիզբ մը ըլլայ՝ յաջողութեամբ յաջողութիւն եւ փառք փառք բարձրանալու: Ապա սուրիահայերուն հաւատարմութիւնը յայտնեց քրիստոնէական մեր հաւատքին, լեզուին եւ ծնընդավայրին՝ Սուրիոյ, եւ վերջապէս երախտագիտական խօսք ուղղեց Սուրիոյ վսեմաշուք Նախագահին, քաջարի բանակին եւ ժողովուրդին:

Առաջնորդ սրբազանին «Պահպանիչ»-էն վերջ, ներկաները առիթ ունեցան Յուշամատենան օրինակներ ստանալու:

ԼԱԹԱՔԻՈՅ ԱԶԳ. ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՎԱՐՇԱՐԱՆԻ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ ՎԱԻԵՐԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԳԷՍ

Հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գեղ. Տեր Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի. կազմակերպութեամբ Լաթաքիոյ Սրբոց Նահատակաց Ազգ. վարժարանի տնօրէնութեան եւ հոգաբարձութեան, Ուրբաթ, 12 Մայիսի յետմիջօրէին բացուող



կատարուեցաւ վարժարանի 100-ամեակին նուիրուած վաւերագրական ցուցահանդէսին, ուր ցուցադրուած էին վարժարանի հիմնադրութեան տարիներէն՝ 1922-էն սկսեալ մինչեւ ներկայ ժամանակներ վարժարանի արխիւները, լուսանկարները, աշակերտներու ցանկեր, վկայագրեր, փաստաթուղթեր եւ ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսին յղած սրբատառ կոնդակը՝ վարժարանի 100-ամեակին առիթով:



«Գանձասար» օրահին մէջ տեղի ունեցած ցուցահանդէսին բացումը կատարեցին սրբազան հայրը, վարժարանի տնօրէն Հուրի Տեյիբմենճեան-Գարամարտեանն ու հոգաբարձութեան ատենապետուհի Մեդրիկ Ապահունի-Մանճեանը, ներկայութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Յարաբերական Սարմիս ներկայացուցիչ Վրէժ Եագուպեանի, ազգային պատասխանատու



Յարութ Գաբրիէլեանի, Լաթաքիոյ եւ Ծովափնեայ շրջանի հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վազգէն Զինյ. Զեօշկերեանի, Զեսապի հոգեւոր տեսուչ Հոգեջ. Տ. Անդրանիկ Վրդ. Զիւրիւմեանի, Հոգեջ. Տեր Մանուկ Վրդ. Պարիխանեանի, Ազգ. երեսփոխանական ժողովի եւ Ազգ. Վարչութեան, միութիւններու ներկայացուցիչներու, վարժարանի հոգաբարձութեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղականութեան, ցուցահանդէսի կազմակերպիչ յանձնախումբին եւ հրաւիրեալներու:

Ցուցահանդէսին ընդմէջէն կը ներկայացուէր 100-ամեայ պատմութիւնը վարժարանի մը, որ իր հիմնադիր փաղանգով, աշակերտներով, կրթական մշակներով, վարչական պատասխանատուներով, նուիրեալ ծառայողներով ու բարերարներով 100 տարի շարունակ Լաթաքիոյ մէջ հանդիսացած է հայապահպանման հիմնական կշռուան:

Ցուցահանդէսի դասաւորման եւ ներկայացման հետաքրքրական ոճը արթափքն էր կազմակերպիչ մարմնին ու յանձնախումբին բժախնդիր աշխատանքին:

ԻՆՉ ԿՐՄԵՆ ԱՍՏՂԵՐԸ

Խոյ
Օգնութեան ձեռք երկարեցէ՛ք ձեր նմանին, որպէսզի Աստուած ալ ձեր քսակը օրինէ: Ձեր առողջութեան ալ հոգ տարէ՛ք՝ հիւանդութիւններուն առաջը առնելու համար:

Ցուլ
Ծանրաբեռնուած կեանքը կը ճնշէ ձեր հոգին: Հաճելի բարեկամական հանդիպում մը պիտի ունենայք այս շաբաթ: Ժպտեցէ՛ք եւ աշխարհն ալ պիտի ժպտի ձեզի:

Երկուորեակ
Բարեկամներէն օգնութիւն մը պիտի ստանայք, որ գոհունակութիւն պիտի պատճառէ ձեզի: Լրջօրէն հետեւեցէ՛ք ձեր գործերուն, որպէսզի յաջողութիւն ունենայք:

Խեցզետիկ
Երկար տառապանքէ ետք վերջապէս խաղաղութիւն պիտի գտնէք: Ձեր շուրջիններուն հիացումին առարկան պիտի դառնայք եւ գովասանքին արժանաւայ:

Առիծ
Մարդիկ ակնածանքով կը վարուին ձեզի հետ: Դուք վեհանձն անձնաւորութիւն էք եւ հոյակապ վարպետ ձեր գործին մէջ: Յարատեւեցէ՛ք:

Կոյս
Գուրգուրոտ, անկեղծ եւ գթասիրտ էք: Բոլորին օգնութեան կը փութաք՝ ձեր կարողութեան համեմատ: Իւրայայտուկ էք եւ գովելի:

Կշիռ
Բացառիկ դատողութեան տեր էք: Մէկ հայեացքով բարեկամը թշնամիէն կը զանազանէք: Մարդոց անտարբեր կեցուածքը ձեր բարկութիւնը կը գրգռէ: Համբերատար եղէ՛ք:

Կարիճ
Խելացի, աշխատասեր եւ հեռատես էք: Վեցերորդ գգայարան մը յաճախ կը զգուշացնէ ձեզ վատ մարդոցմէ: Բարձունքներ պիտի նուաճէք եւ հպարտանայք:

Աղեղնաւոր
Հեռաւոր երկրէ բարեկամ մը պիտի տեսնէք եւ ուրախանայք: Փոքր նուէր մըն ալ պիտի ստանայք: Ձեր խանդավառութիւնը պիտի հրապուրէ բոլորը: Կյսպէս մնացէ՛ք:

Այծեղջիւր
Հաճելի անակնկալ մը պիտի ունենայք, որ պիտի ջերմացնէ ձեր հոգին: Ընտանիքի անդամներով ընթրիքի սեղանի մը շուրջ պիտի գրուցէք: Շուտով ձեր նպատակները պիտի իրագործէք:

Ձրիս
Նիւթական տագնապ մը պիտի յաղթահարէք եւ յաջողութիւն ունենայք վերջապէս: Հաճելի պտոյտ մը պիտի կազմակերպէք բնութեան գիրկը, որ պիտի խանդավառէ ձեզ:

Ձուկ
Մարդիկ ձեր գործերուն վրայ կը հիասթափանան: Դուք արժանի էք գովասանքի: Մի՛ երկմտիք: Յարատեւեցէ՛ք նոյն թափով եւ բարձունքներ պիտի նուաճէք:



ՀԱՄԱԿԱՐԳԻՉԸ ԵՒ ՊԱՏԿԵՐԱՍՓԻՒՐԸ՝ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ԱՃՄԱՆ ԸՆԹԱՅՔԻՆ

Ծնողներ եւ պատանիներ ընդհանրապէս համակարգիչները կը համարեն տեղեկութեան վըստահելի եւ ստոյգ աղբիւր: Համակարգիչին եւ ձեռնահեռաձայնին օգնութեամբ պատանիներն ու երիտասարդները գիտելիքներու անսպառ աղբիւր եւ յարաբերութիւններու անսահման կարելիութիւններ ունին:

Այդուհանդերձ, այնպէս ինչպէս ծնողներ երբեմն կ'արգիլեն իրենց զաւակները խօսիլ անձնասթապերու հետ, բանալ դուռը անձնասթապ այցելուներու եւ հեռաձայնով ոչ մէկ տեղեկութիւն յայտնել օտաներու, պէտք է գիտակցին, որ նոյն ձեռքով ալ պէտք է հետեւին իրենց զաւակին համակարգիչին դիմաց անցուցած ժամանակին:



Ծնողներ յաճախ չեն գիտակցիր, որ կրնան իրենց թերահաս զաւակները պաշտպանել համացանցային ծառայութիւններու վտանգներէ: Պատանիները բազմաթիւ գրոյցի սենեակներու, կամ խմբակներու մաս կը կազմեն եւ այնտեղ անոնց անցուցած ժամանակը անդեկավարելի կը մնայ յաճախ: Բոլորին կողմէ ընտրուած պայմանական ծածկանունները թոյլ չեն տար պարզելու, թէ անձը, որուն հետ պատանին կը խօսի, նոյնպէս պատանի՞ է, թէ պատանի ձեւացող խաբէբայ մը:

Աւելին. ի տարբերութիւն սովորական նամակագրական կապի մէջ գտնուող ընկերներուն եւ անոնց, որոնք կ'այցելեն պատանիին տունը, ծնողները չեն տեսներ, թէ որո՞ւ հետ կը յարաբերի իրենց զաւակը ելեկտրոնային նամակագրութեամբ կամ գրոյցի սենեակներու մաս կազմելով: Ցաւօք, երբեմն շատ լուրջ կրնան ըլլալ նման յարաբերութիւններու հետեւանքները, երբ պատանիները անձնասթապերուն կու տան անձնական տեղեկութիւններ (անուն, գաղտնաբառ, հեռաձայնի թիւ, հասցէ) կամ կը համաձայնին հանդիպիլ իրենց գրուցակիցին հետ եւ այլն:

Համացանցի ճամբով պատանիին սպառնացող վտանգներն են.
- Կայքեր, որոնք չեն համապատասխաներ պատանիին մակարդակին,
- Ատելութիւն, բռնութիւն եւ գայթակղութիւն քարոզող տեղեկութիւններ,
- Կայքեր, ուր պէտք է գրանցուիլ շահեր ստանալու կամ որեւէ խմբակի անդամագրուելու համար՝ անձնական տուեալներ մտցնելով,
- Համակարգիչին առջեւ անցուցած ժամերը կը զրկեն պատանին առողջ զարգանալու եւ իսկական ընկերային հմտութիւններ ունենալու կարելիութիւններէն:

Հետեւաբար համացանցի դիմաց անցուցած ժամերը պատանիին համար աւելի ապահով եւ օգտակար դարձնելու համար ծնողները պէտք է.
- Սահմանափակեն համակարգիչին առջեւ անցուցած պատանիին ժամերը:
- Բացատրեն անոր, որ անձնասթապ ծածկանուններով անձերու հետ գրուցելը նոյնքան վտանգաւոր է, որքան անձնասթապ մարդոց հետ սովորական կեանքի մէջ գրուցելը:
- Բացատրեն պատանիին, որ երբեք կարելի չէ անձնական տեղեկութիւն տալ համացանցով:
- Բացատրեն անոր, որ պէտք չէ տունէն դուրս, անձնապէս հանդիպում ունենայ անձնասթապ գրուցակիցներու հետ:

- Պատանիին չտան դրամատան հաշիւներու թիւեր, գաղտնաբառեր, որոնք անոր կարելիութիւն կու տան բան մը գնելու համացանցով կամ մտնելու անթոյլատրելի կայքեր:
- Բացատրեն անոր, թէ պայման չէ որ համացանցի վրայ իրենց ամէն տեսածն ու կարդացածը ճիշդ ըլլայ:

Պատանիներու եւ թերահասներու զբաղումի ժամերուն մէջ հիմնական տեղ կը գրաւէ նաեւ պատկերասփիւռը, որ մեծ ազդեցութիւն կը ձգէ անոր վրայ: Պատանիները օրական միջին հաշուով 3-4 ժամ պատկերասփիւռ կը դիտեն: Դպրոցը աւարտելէ ետք անոնք աւելի երկար ժամեր կը տրամադրեն պատկերասփիւռին: Պատկերասփիւռը, սակայն, բացի պատանին զբաղեցնելէ եւ տեղեկացնելէ, կրնայ անցանկալի ազդեցութիւն թողուլ անոր վրայ:

Պատկերասփիւռին դիմաց անցուցած ժամերը պատանին կը զրկեն այլ կարելի գաղտնաբառերէ, ինչպէս՝ ընթերցումէ, դպրոցական աշխատանքէ, խաղէ, ընտանիքին հետ գրուցելէ կամ ընկերութեան մէջ զարգանալէ: Պատանիները պատկերասփիւռին ճամբով կրնան ստանալ նաեւ այնպիսի տեղեկութիւններ, որոնք յաճախ սխալ կ'ըլլան, սակայն կ'ազդեն անոնց երեւակայութեան վրայ:

Պատկերասփիւռին դիմաց շատ երկար ժամանակ անցընելու պարագային պատանիները՝ դպրոցի մէջ ցած գնահատանիչներ կը ստանան, աւելի քիչ գիրք կը կարդան, աւելի քիչ դաս կը սորվին, կը գիրնան եւ երբեմն օտար բարքեր կ'իրագցնեն:

Հետեւաբար ծնողները պէտք է.
- Ձանձան պատանիին հետ միասին պատկերասփիւռ դիտել:
- Ընտրեն պատանիին համապատասխան ծրագիրներ:
- Սահմանափակեն անոր դիտելու ժամերը:
- Անջատեն պատկերասփիւռը ընտանեկան ընթրիքի եւ դասի պահերուն:
- Անջատեն պատկերասփիւռը, երբ նկատեն, որ ցուցադրուող ծրագիրը պատանիին համապատասխան չէ:

Նախընտրելի է, որ ծնողները իրենց զաւակներուն հետ միասին ընտրեն մանկական, գիտական այնպիսի ծրագիրներ, որոնք դիտելով պատանին իր ազատ ժամերը կը լցնէ դաստիարակիչ օրինակ մը քաղելով կամ գիտելիք մը սորվելով:

Մարզական



Ռաֆֆի Սիկանյան

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

- Սուրիոյ պասքեթի տղոց Ա. դասակարգի փխոյեանութեան մրցումներուն Հալէպի մէջ Աիլին 80 - 73 արդիւնքով պարտութեան մատնեց դրացի ճալաարը եւ ապահովեց աղիւսակի առաջնութիւնը, նախքան ակարտական քառեակի հանդիպումները: Դամասկոսի Ռահտեն եւս շարունակելով իր յաջող արդիւնքները կրցաւ յաղթել Նաուաիրին:



- Սուրիոյ հաւաքականի խմբապետ Օմար Սոման Նոր պայմանագիրով միացաւ Զաթարի ակադեմիայի կազմին:

- Սուրիոյ ֆութպոլի փխոյեանութեան մրցակցութիւնը աւելի ուժեղ դառնալով Հալէպի Աիլին 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Հըթինը, իսկ Թըշիին Նոյն արդիւնքով յաղթեց Մաճըտին: 1 / 1 հաւասարութեամբ ակարտեցաւ Ռահտեն - Թալիսա եւ Ճէշ-Ճապլէ հանդիպումները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՄԱՆՉԵՍԹՐ ՍԻԹԻՆ ՍՏԱՅԱՐ ԱՆՂԻՈՅ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԲԱԺԱԿԸ

Մանչեսթըր Սիթիի մարզադաշտին վրայ Չելսիի դէմ տեղի ունեցած հանդիպումին ակարտին, Անգլիոյ Նորընձայ Կուարտիլայի գլխաւորած կազմը ստացաւ Անգլիոյ փխոյեանութեան տիտղոսի բաժակը:



Նախապէրջին փուլին, Մանչեսթըր Սիթին (36 խաղ) 1 / 0 արդիւնքով պարտութեան մատնեց Լոնտոնի Չելսիին եւ ապահովեց իր 88-րդ կէտը, բայց ան կրցած էր տիտղոսը Նուաճել նախքան այս փուլը: Սիթիի մրցակից՝ Արսենալը այս փուլին 1 - 0 արդիւնքով զիջեցաւ Ֆորեսթին: Նշենք որ այս հերթական երրորդ անգամն է, որ Սիթին կ'արժանանայ Անգլիոյ փխոյեանութեան ինչպէս նաեւ ան գլխաւոր թեկնածուն է Չեմփիընը Լիկի կոչումին:

ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏ ԱՐԺԱՆԱՅԱՐ ԵՐՈ ԼԻԿԻ ՊԱՏԵԹԻ ԿՈՉՈՒՄԻՆ

Սպանիոյ մայրաքաղաքի Ռեալ Մատրիտի պասքեթի խումբը արժանացաւ Երօ Լիկայի փխոյեանութեան, ակարտական մրցումին պարտութեան մատնելով Յունաստանի Օլոմփիաքոսը 79 - 78 արդիւնքով:



Առաջին քառորդին, յունական խումբը տիրապէտեց խաղարկութեան, որ ակարտին հասաւ 24 - 17 արդիւնքով, որմէ ետք արքայական ակումբը կրցաւ կազմաւորել իր խաղարկութեան ոճը եւ իշխել արդիւնքին՝ կիսախաղը ակարտելով 45 - 45 հաւասարութեամբ: Երկրորդ կիսախաղը ընթացաւ բարձր մակարդակի խաղարկութեամբ, ուր գոյգ խումբերը փոխն ի փոխ ձեռք կը ձգէին արդիւնքը, բայց Ռեալի կազմը, շնորհիւ իր խաղացողներու փորձառութեան, կրցաւ յաղթական դուրս գալ՝ տիրանալով Երօ Լիկի կոչումին:

ԽԱԶԲԱՌ (ՄԻ 439)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

- 1- Ուշ: Յարմար:
- 2- Տառի մը անունը: Ահաւսիկ: Եւս: 2600:
- 3- Աղբիւր: Տառի մը անունը: Շատ պաղ:
- 4- Ուռնակ: Անմարդաբնակ:
- 5- Յարաբերական դերանուն: Ս. Աստուածածնայ նուիրուած տաղ. «..... Նման ես»:
- 6- Հակառակ՝ գոհացում: Ձայնանիշ:
- 7- Երգեհոնի փող: Չբացուած ծաղիկ:
- 8- Չրահուած: Եական բայ:
- 9- Ճարնական թատրոն: Ս. Աստուածածնայ մայրը:
- 10- Հացահատիկ: Եւս:
- 11- Կրկնուած ձայնաւորներ: Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւններէն: Կրկնուած բաղաձայններ:

12- Արամ Մանուկեանի յուղարկաւորութեան արտասանուած հետեւեալ խօսքի հեղինակին մականունը. «Երբ գիշերը գայ, մտքը ձեր հոգիի սենեակը եւ խօսքը ձեր խղճի հետ եւ ըսէք, արդեօք աշխատե՞ր էք իսկ ժողովրդի համար, ինչպէս Արամը, եղե՞ր էք այնքան անձնագոհ, որքան Արամը, տուե՞ր էք ձեր ամբողջ կեանքը իսկ ժողովրդին, ինչպէս Արամը...»: Հակառակ՝ ջրհեղեղէն փրկուած նահապետը:


Ուղղահայեաց

- 1- Ոտնակոխ: Հակառակ՝ անձնական դերանուն:
- 2- Հակառակ՝ այր սեղին պատկանող: Ուժգին:
- 3- Հակառակ՝ եկեղեցւոյ այն մասը, ուրկէ կը քարոզեն եւ ուր կը գտնուի սեղանը:
- 4- Իշխանական աթոռ: Գրաստի ոտքին ներքեւ գամելու երկաթ:
- 5- Մարսափ: Հակառակ՝ գետի մէջէն ոտքով անցը:
- 6- Արօթամատեան մը: Հակառակ՝ աչք: Հակառակ՝ հնարք:
- 7- Բայական լծորդութիւն: Հակառակ՝ ժխտական նախածանց: Հակառակ՝ յաւելում:
- 8- Հակառակ՝ ժխտական նախածանց: Խօսքի մասերէն: Անձնական դերանուն:
- 9- Եւս: Հակառակ՝ տարի: Երաժշտական գործիքներու ոտքով շարժուող լծակը:
- 10- Հակառակ՝ կարմիր պտուղ մը: Եւս:
- 11- Մարգարէ մը: Ձայնաւոր տառեր: Հակառակ՝ շաղկապ:
- 12- Հայոց Բ ամիսը: Չխորտակուող:

ԽԱԶԲԱՌ (ՄԻ 438)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ա	կ	ա	ն	ա	կ	ի	տ	հ	ա	ճ	
2	ն	ե			ա	ա	ա	ա	ա	ա	ա	
3	ա	բ	ի	լ	կ	ր	ա	մ		մ		
4	գ	ն	ւ	ս	ն	կ	ա	ր	ա		ա	
5	ն	ր	ա	կ	ա	խ	ա	ն		ր		
6	ր				ն	ր	ա	ր	մ	ա	տ	
7	ն	ւ	ր	ն	ւ	կ		ա	հ	ա		
8	յ			ւ	կ	ա	շ	ն	ա	կ		
9	ն	ա	լ		ց	ա	ր	ա				
10	յ	ի	շ	ա	ա	կ	ն	ե	ր	ը		
11	ե	ր	ջ	ա	ն	կ	ն	ւ	թ	ի	ւ	ն
12	լ	ի	ա	կ	ա			ա	ղ			

ԼՈՒՐԵՐ



ՀԱՄԲԱՐՉՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ Ս. ՅԱԿՈԲՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՄԱՍՈՒՆՔԻ ՆՈՒԻՐՈՄ

Ուրբաթ, 19 Մայիս 2023-ին, երեկոյան ժամը 6:00-ին, Նախագահության Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, մեր Տի-

հոր: Ան յայտնեց, որ Ս. Յակոբոս առաքելաբար բարեխօս սուրբ Է ժողովուրդին համար եւ այսօր առաքելին մասունքը որպէս օրհնութիւն կու գայ ճեղիւրէի հայութիւնը հաւատ-



րոջ եւ Փրկչի Յիսուս Զրիստոսի Համբարձման տօնին առիթով հանդիսաւոր Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցուեցաւ Գամիշլիի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ:

Արարողութեան ներկայ գըտնուեցան Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ ճեղիւրէի Առաջնորդ Մար Մորիս Ամսիի եւ իրեն ընկերակցող քահանաներ, Հայ Կաթողիկէ համայնքի ճեղիւրէի Առաջնորդ Արիի. Ս. Անդրանիկ Եպս. Այվազեան, ճեղիւրէի Առաջնորդական Փոխանորդ Հոգ. Ս. Լեւոն Վրդ. Եղիայեան, Ազգ. Վարչութեան անդամ Գուրգէն Գալուստեան, Կրօնական Ժողովի անդամ Արժ. Ս. Գառնիկ Զինյ. Զափանեան, Արժ. Ս. Պսակ Զինյ. Պերպերեան,

քի մէջ առաւել եւս գօտեակնելու: Հայր սուրբը ըսաւ, որ մասունքը նուիրուած է Ազգարեան ընտանիքին կողմէ, իսկ խաչածեւ մասնակալը՝ Խաչիկ Մելքոնեանին կողմէ, իր գաւակը Յակոբ անունը կրելուն համար: Հայր սուրբը որդիական սիրով շնորհակալութիւն յայտնեց սրբազան հոր՝ հովուական այցելութեան եւ մասունքը նուիրելուն համար: Ապա, ան հրաւիրեց սրբազան հայրը իր հայրական պատգամը ուղղելու:

Սրբազան հայրը Նախ փառք եւ գոհութիւն յայտնեց Աստուծոյ այս գեղեցիկ առիթին համար, որ անգամ մը եւս, երկրորդ անգամ ըլլալով շնորհեց ներկայ գտնուելու ճե-



Թեմի Յարաբերական մարմնի ներկայացուցիչ Խաչիկ Մելքոնեան, Գամիշլիի թաղական խորհուրդի ատենապետ Վարդան Մուրատեան, թաղականութեան անդամներ, մարզական, մշակութային եւ բարեսիրական միութիւններու ներկայացուցիչներ եւ ժողովուրդի հոծ բազմութիւն:

Հանդիսաւոր թափօրով Առաջնորդ Սրբազան Հայրը, ինչպէս նաեւ ճեղիւրէի Առաջնորդական Փոխանորդ Հոգ. Ս. Լեւոն Վրդ. Եղիայեան Ս. Յակոբոս առաքելաբար մասունքը բռնած մուտք գործեցին եկեղեցի:

Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցեց Հոգ. Ս. Արմէն Արդ. Գալաճեան:

Ճեղիւրէի Առաջնորդական Փոխանորդը հոգեկան ցնծութեամբ բարի գալուստ մաղթեց սրբազան

գիրէի տարածքէն ներս, մանաւանդ Գամիշլիի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ՝ միասնաբար աղօթելու, կիսելու աստուածային օրհնութիւններն ու բարիքները:

Մակար սրբազան անդրադառնալով Համբարձման տօնի խորհուրդին, հրաւիրեց հաւատացեալները, որ առաքելներու օրհնակին համաձայն հնագանդ ըլլան Աստուծոյ կամքին եւ հաւատարիմ՝ իրենց կոչումին, այնպէս ինչպէս առաքելները անսալով Զրիստոսի պատուիրակները վերադարձան եւ Երուսաղէմէն չիեռացան մինչեւ որ Սուրբ Հոգին ստանալով զօրութիւն հազան եւ վկաներ դարձան: Նոյնպէս ալ մենք այսօր մեր կեանքին մէջ հրաւիրուած ենք առաքելներու որդեգրած ձեւին հետեւելով մեր հաւատարմութիւնը յայտնելու եկեղեցւոյ

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ ՀՈՎՈՒԿԱՆ ԱՅՅԵՆՈՒԹԵԱՄԲ ԺԱՄԱՆԵՅՑ ԳԱՄԻՇԼԻ

Ուրբաթ, 19 Մայիս 2023-ի միջօրէին, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան հովուական այցելութեամբ ժամանեց Գամիշլի, ուր տեղւոյն օղակայանէն ներս ջերմապէս դիմաւորուեցաւ ճեղիւրէի Առաջնորդական Փոխանորդ Հոգ. Ս. Լեւոն Վրդ. Եղիայեանի, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կիրակնօրեայ Դպրոցներու տնօրէն Հոգ. Ս. Արմէն Արդ. Գալաճեանի, Արժ. Ս. Պսակ Զինյ. Պերպերեանի, թեմի Յարաբերական Մարմնի ներկայացուցիչ Խաչիկ Մելքոնեանի, Գամիշլիի թաղական խորհուրդի ատենապետ Վարդան Մուրատեանի եւ թաղականութեան անդամներու: Սրբազան հայրը ջերմեռանդութեամբ դիմաւորուեցաւ նաեւ Օղակայանի գիւնուորական պատասխանատու Ահմատի եւ օղակայանի տնօրէնուհի Լարայի կողմէ,



որոնց հետ պատուոյ սրահէն ներս մտերմիկ հանդիպում ունեցաւ, ներկայութեամբ՝ Սուրիոյ Խորհրդարանի անդամներու, եւ Բերիոյ Հայոց Թեմի ժողովուրդին եւ ժողովականութեան ջերմ ողջոյնները փոխանցեց անոնց:

Սրբազան հոր ընկերակցող պատուիրակութեան մաս կը կազմէին Ազգ. Վարչութեան անդամ Գուրգէն Գալուստեան եւ Կրօնական Ժողովի անդամ Արժ. Ս. Գառնիկ Զինյ. Զափանեան:

Սրբազան հայրը հովուական այցելութեամբ, մէկ շաբթուան ընթացքին պիտի այցելէ ճեղիւրէի բոլոր շրջանները եւ մեր ժողովուրդի գաւակներուն հետ ըլլալով՝ իր հայրական յորդորներն ու օրհնութիւնները պիտի փոխանցէ անոնց:

աւանդութիւններուն եւ արժեքներուն:

Սրբազան հայրը եղբայրական սիրով շնորհակալութիւն յայտնեց Ասորի Ուղղափառ համայնքի ճեղիւրէի Առաջնորդին, հոգեւորականներուն եւ Հայ Կաթողիկէ համայնքի ճեղիւրէի Առաջնորդին, արարողութեան իրենց բերած մասնակցութեան եւ ներկայութեան համար: Սրբազան Հայրը բարձր գնահատեց ճեղիւրէի Առաջնորդական Փոխանորդ հայր սուրբը, իր ծառայութեան, աշխոյժ գործունէութեան եւ կազմակերպուած գեղեցիկ ընդունելութեան համար, մաղթելով ուժ, կորով, յարատեւ վերելք եւ յաջողութիւն իր աշխատանքներուն:

Քարոզի աւարտին, սրբազան հայրը իր օրհնութիւններն ու բարեմաղթութիւնները յայտնեց այս առիթով:

Աւարտին, թափօրի խաչով եւ խաչվառներով առաջնորդուած թափօրով ժողովուրդը դուրս եկաւ եկեղեցիէն: Թափօրին մաս կը կազմէին կիրակնօրեայ դպրոցի աշակերտները իրենց ձեռքին ջահեր ունենալով, ՀՄԸՄ-ի Գամիշլի մասնաճիւղի փողերախումբը, Սկաւտ

Խորհուրդն ու տարագաւոր սկաւտները եւ մոմ բռնած հաւատացեալներու մեծ բազմութիւն: Թափօրը ուղղուեցաւ դէպի փոխանորդարան, ուր Ս. Յակոբոս առաքելաբար, Ս. Գեորգ զօրավարի եւ Ապրիլեան Սրբոց Նահատակաց մասունքներով տեղի ունեցաւ հանդիսաւոր անդաստան: Օրհնուեցան աշխարհի չորս ծագերը: Ս. Յակոբոս առաքելաբար մասունքը բռնած էր առաջնորդ սրբազան հայրը, Ս. Գեորգ զօրավարի մասունքը՝ Հայ Կաթողիկէ համայնքի ճեղիւրէի առաջնորդը, իսկ Ապրիլեան Սրբոց Նահատակաց մասունքները՝ Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ ճեղիւրէի առաջնորդը:

Անդաստանէն ետք ջրօրհնէք կատարուեցաւ: Այնուհետեւ սրբազան հայրը ընդառաջելով ճեղիւրէի առաջնորդական փոխանորդ հայր սուրբին խնդրանքին, տեղւոյն Արժ. Ս. Պսակ Զինյ. Պերպերեանի 14-ամեայ անխնջ, անդուլ, հաւատքով եւ անշահախնդիր ծառայութեան ի տես՝ գայն պատուեց լանջախաչով մը:

Մարիա Պողկեան